

Աղթամարի Սուրբ Խաչ Եկեղեցւոյ Ամենամեայ Պատարագը Յետաձգուած է

Աղթամարի կղզիի վրայ գտնուող Սուրբ Խաչ եկեղեցիէն ներս վերջին տարիներուն տեղի ունեցող պատարագը յետաձգուած է «ապահովութեան նկատառումներով»։ - «նկատի առնելով վերջին օրերուն կատարուող ահաբեկչական յարձակումները եւ զոհերու մասին լուրերը՝ վան քաղաքի եւ շրջակայ շրջաններուն անվտանգութեան խնդիրները չստեղծելու նպատակով, ամենամեայ ուխտագնացութիւնը յետաձգուած է», ըսուած է այս առթիւ Պոլսոյ Պատրիարքարանի հրատարակած յայտարարութեան մէջ։

Խօսքը կը վերաբերի Քրդական Աշխատաւորական Կուսակցութեան անդամներուն եւ թրքական բանակին միջեւ վերականգնող բախումներուն։

Թուրք-քրդական բախումներու հետեւանքով շրջանէն ներս ստեղծուած անկայուն իրավիճակի պատճառով պատրիարքարանի կողմէն պատարագի յետաձգումը անակնկալ չէր։ Մանաւանդ, որ ամիսներ առաջ թուրք ազգայնականները Կարսի մէջ հայերու որս յայտարարուած էին, իսկ թրքական «հայկական անհիմն պնդումներուն» դէմ պայքարող կազմա-

կերպութեան ներկայացուցիչները յայտնած էին, որ իրենք կը պատրաստուին թույլ չտալ, որ հայերը վանի Աղթամար կղզիի եկեղեցւոյ մէջ ամենամեայ պատարագ կատարեն։

«Ակոս» թերթի հայերէն էջերու խմբագիր Բագրատ Էստուկեան «Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցի ընթացքին ըսած է, որ քրդաբնակ քաղաքներու, որոնց շարքին նաեւ վանի ու Տիարպէ-բիրի մէջ տեղի ունեցած բախումներուն հետեւանքով չեղեալ յայտարարուած են ոչ միայն Սուրբ Խաչի պատարագը, այլեւ բազմաթիւ այլ միջոցառումներ։

Էստուկեան այս որոշման մէջ քաղաքական ենթատեքստ չի տեսներ։

Աղթամար կղզիի Սուրբ Խաչ հայկական եկեղեցին թրքական կառավարութեան աջակցութեամբ վերականգնուեցաւ եւ վերաբացուեցաւ 2010 թուականին, եւ անկէ ի վեր պատրիարքարանը աշխատեց տարին մէկ անգամ, Սեպտեմբերի առաջին Կիրակի օրը, պատարագ կը մատուցէր։ Այս տարի սակայն, արարողութիւնը յատուկ նշանակութիւն պիտի ունենար, քանի որ պիտի գուզադիպէր Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին։

Պաղեստինի Դեսպանը ՍԴՅԿ Կեդրոնական Վարչութեան Իւր

Մեծն Բրիտանիոյ մօտ Պաղեստինի դեսպան՝ Մանուէլ Հասնեան այցելեց Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան Երևանի գրասենեակ, ուր ան ընդունուեցաւ Վարչութեան ատենապետ Ընկ. Յակոբ Տիգրանեանի կողմէ։ Տեսակցութեան ընթացքին անդրադարձ եղաւ հայ-պաղեստինեան ընդհանուր յարաբերութիւններուն։ Դեսպանը յայտարարեց, որ յառաջիկայ ամիսներուն Երեւանի մէջ բացուած պիտի կատարուի Պաղեստինի դեսպանատան, որուն գուզա-

հեռ նաեւ Ռամալլայի մէջ պիտի հիմնուի Հայաստանի դեսպանատուն։ Ձրուցակիցները անդրադարձան Միջին Արեւելեան զարգացումներուն եւ շեշտեցին շրջանի փոքրամասնութիւններուն ամէն գնով զօրակցելու հրամայականը։ Ընկ. Տիգրանեան տեղեկութիւններ փոխանցեց կուսակցութեան գործունէութեան եւ ծրագիրներուն մասին։

Կողմերը պատրաստակամութիւն յայտնեցին տարբեր ոլորտներու մէջ համագործակցութիւնը ամրապնդելու մասին։

Հայ Յերոս Սը


Ֆրանսայի նախագահ Ֆրանսուա Օլանտ հաստատեց, որ Ամսթերտամէն Փարիզ ուղղուող գնացքին մէջ կարելի եղած էր սպանդէ մը խուսափել, շնորհիւ ամերիկացի երեք ուղեւորներու եւ բրիտանացիի մը, որոնք միջամտած էին եւ կանխարգիլած ահաբեկչական գործողութիւնը։ Օլանտ շքանշաններ յանձնեց 4 անձերուն եւ դիտել տուաւ, որ անոնք իրենց կեանքը վտանգած էին, փրկելու համար մնացեալ ուղեւորները։

Քիչ մը ուշացումով ի յայտ եկաւ, որ գինեալին հրաձիգը խլող անձը ազգութեամբ հայ է։ Մարք Մուղալեան՝ ծագումով ամերիկեան վերահսկող նահանգէն է։ Ան միջամտած է պաշտպանելու իր կինը եւ խլած է գինեալին գէնքը։



Վերջինս ատրճանակը դուրս բերելով կրակած է Մուղալեանին վրայ ու զայն վիրաւորած։ Հայազգի հերոսը այժմ կը գտնուի հիւանդանոցին մէջ, վիճակը կայուն է։ Ան նկարիչ է, քանդակագործ եւ երաժիշտ։ Կը կարծուի, որ ան եւս հետագային պիտի պարգևատրուի։

Վենետիկի Յանձնաժողովի Անդամները Կ'ակնկալեն, Որ Իրենց Նկատառումները Հաշուի Կ'առնուին



Վենետիկի Յանձնաժողովի անդամները նախագահ Սերժ Սարգսեանի հետ իրենց ունեցած հանդիպումի ժամանակ

Վենետիկի Յանձնաժողովի անդամները կ'ակնկալեն, որ իրենց առաջարկութիւնները հաշուի կ'առնուին Հայաստանի իշխանութիւններու առաջարկած սահմանադրական փոփոխութիւններու նախագծի վերջնական տարբերակին մէջ։

Հեղինակաւոր միջազգային յանձնաժողովի անդամներէն Աւստրիացի Քրիստոֆ Գրաբենուարտը յայտարարեց, որ Երեւանի մէջ իրենց ունեցած հանդիպումներու ընթացքում նման հաւաստիացումներ ստացած են։

«Մենք քննարկումներ ունեցանք, որոնց ժամանակ մենք յստակ առաջարկներ ըրած ենք եւ ստացած ենք պատասխան, որ մեր նկատառումները հաշուի կ'առնուին։ Այն ձեւակերպումներէն, որ լսած ենք, կրնանք յստակօրէն ենթադրել, որ կ'ըլլան հական փոփոխութիւններ», - ըսաւ ան։

Վենետիկի Յանձնաժողովի լատուիացի անդամ Ալվարո Էնդրիս աւելցուց, որ իրենց քննարկումներու առանցքը եղած է կայուն մեծամասնութիւն ապահովելու եւ խորհրդարանական երկրորդ փուլ կազմակերպելու մասին դրոյթը։ Իտալիացի փորձը որպէս օրինակ բերող նախագծի հեղինակներու իրենք բացատրած են, որ Իտալիոյ խորհրդարանական ընտրութիւններուն երկրորդ փուլի փորձը տակաւին չկայ։ Էնդրիս ըսաւ որ, իրենք առաջարկած են նախագիծէն ընդհանրապէս հանել այդ դրոյթները։

Այն հարցին թէ արդեօք Վենետիկի Յանձնաժողովը կրնայ երաշխաւորել, որ ներկայացուած սահմանադրական փոփոխութիւնները աւելի ժողովրդավար կը դարձնեն Հայաստանը, Գրաբենուարտը պատասխանեց. - «Վենետիկի Յանձնաժողովը այն մարմինը չէ, որ ամբողջ գործընթացի համար երաշխիք տայ։ Յանձնաժողովը չի կրնար վկայական տալ, որ

2-3 տարի յետոյ Հայաստանի մէջ ժողովրդավարութիւնը աւելի լաւ վիճակի մէջ կը գտնուի, քան այսօր է։ Մենք միայն կրնանք գնահատական տալ ներկայացուած տէքստին, արդեօք այն կը համապատասխանէ եւրոպական չափանիշներուն, թէ՛ ոչ»։

Հարցին՝ թէ յանձնաժողովը ծանօթ է հնոց քննադատութեան, թէ Սերժ Սարգսեան իր իշխանութիւնը երկարաձգելու համար է որ այս սահմանադրական փոփոխութիւնները նախաձեռնած է, Գրաբենուարտը պատասխանեց. - «Եթէ որոշ կուսակցութիւններ սահմանադրական փոփոխութիւններու ետեւը կը տեսնեն այլ նպատակներ, ապա Վենետիկի Յանձնաժողովն այն մարմինը չէ, որ կրնայ ըսել՝ այդ իրականութեան կը համապատասխանէ, թէ՛ ոչ»։

Լրագրողներէն մէկու այն դիտարկման, թէ Վենետիկի Յանձնաժողովը, սահմանադրութեան նախագիծի քննարկումներուն մասնակցելով, արդեօք չի՞ օրինականացնել Հայաստանի նահանջը ժողովրդավարութեան ուղղութեամբ, յանձնաժողովի անդամ արձագանգեց. - «Վենետիկի Յանձնաժողովը գործիք դարձնելու փորձերը, բնականաբար, քաղաքական բանավէճի մէջ մասն են, բայց այդ մերը չէ, եւ մենք չենք մասնակցիլ որեւէ շահարկման»։

«Ազատութիւն» ռատիոկայանի հետ հետ զրոյցի ընթացքին Յանձնաժողովի անդամ Ալվարո Էնդրիս յայտնեց, որ Վենետիկի Յանձնաժողովը ընդհանուր առմամբ դրական կը գնահատէ սահմանադրական փոփոխութիւններու նախագիծը։ Ան միաժամանակ յաւելցուց որ, իրենց հիմնական եզրակացութիւնը կու տան Սեպտեմբերի վերջերուն, իսկ պաշտօնական վերջնական եզրակացութիւնն ալ կը հաստատուի Հոկտեմ-

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Որտե՞ղ է սկսվում իշխանափոխությունը

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Երբորդ հանրապետությունում տեղի ունեցած բոլոր ընտրությունների պաշտոնական արդիւնքներով՝ ընդդիմությունը պարտուել է: Ինչո՞ւ: Մինչև հիմա սրան տրուել է շատ ձիշդ, բայց շատ պարզ պատասխան. որովհետև իշխանությունը կեղծել է ընտրությունների արդիւնքները:

Այն, որ իշխանությունը կեղծելու է ընտրությունների արդիւնքները, մենք գիտենք առնուազն 20 տարի: Գիտենք նաև, թե ով պետք է կազմակերպի ընտրակեղծարար իշխանությունն ձեռքը բռնելու գործը: Դա պիտի անի ընդդիմությունը: Բայց փաստ է նաև, որ ընդդիմությունը չի կարողանում դա անել: Ու որպեսզի ընտրակեղծարար եւ յանցագործ իշխանությունը անընդհատ չվերադառնա, մենք պետք է հասկանանք, թե ինչու ընդդիմությունը չի կարողանում բռնել ընտրակեղծարար իշխանությունն ձեռքը: Սրա պատճառները շատ են, բայց որպեսզի կարողանանք տրամաբանական շղթան կառուցել, հարցի քննարկումը սկսենք կարեւոր պատճառներից մէկի քննարկումից:

Կարծում ենք՝ կարեւոր պատճառներից մէկն այն է, որ բոլոր ժամանակների ընդդիմությունները չափից շատ են կենտրոնացած եղել Ազատության հրապարակի վրայ: Սա ընտրությունների կեղծման հարցի հետ ուղիղ կապ ունի, որովհետև ընտրությունները կեղծուում են ոչ թէ Ազատության հրապարակում, ոչ էլ, պատկերացրեք՝ կենտրոնական Ընտրական Յանձնաժողովում, այլ առաջին հերթին՝ հանրապետության շուրջ 2000 ընտրական տեղամասերում: Եւ պրոբլեմն այն է, որ ընդդիմությունը սովորաբար կարողանալով տասնեակ հազարավոր մարդիկ հավաքել Ազատության հրապարակում, չի կարողացել վերը նշուած 2000 ընտրական տեղամասերում վստահուած անձինք ունենալ: Այսինքն՝ վստահուած անձինք ունեցել է, բայց միայն ընտրական տեղամասերի մի մասում: Շատ յաճախ՝ փոքր մասում: Եւ ընդդիմության վստահուած անձինք իրենց այդ կարգավիճակի մասին սովորաբար իմանում են ընտրություններից մի քանի օր առաջ, որովհետև վստահուած անձ լինելու ինդրանքով իրենց դիմում է մի ընկեր, բարեկամ, քեռի կամ քեռու տղայ: Ու եթէ նրանք նոյնիսկ արձագանքում են այս ինդրանքին, ընտրական տեղամասում յայտնուելիս իրենց զգում են ինչպէս մութ անտառում, որովհետև երբեք Ընտրական օրէնսգիրք չեն կարողացել, որեւէ մէկը նրանց չի պատմել Ընտրական օրէնսգրքի մասին, կամ եթէ պատմել է՝ տեղամաս ճանապարհուելուց առաջ, ոտքի վրայ, կամ տեղամաս տանելիս՝ ավտոյի մէջ:

Կան, իհարկէ, ոչ այսպիսի դէպքեր, բայց դէպքերի առնուազն 80 տոկոսը հենց այսպիսին է եւ նոյնիսկ այսպիսի դէպքերով ընդդիմությունը կարողանում է վստահուած անձինք ունենալ լաւագոյն դէպքում ընտրական տեղամասերի 50 տոկոսում: Ամենալաւատեսական գնահատականներով: Եւ հաշուի առէք՝ ընդամէնը մէկ վստահուած անձով:

Իսկ ինչո՞ւ է էսպէս: Որովհետև հանրապետությունն բոլոր ընտրական տեղամասերի շուրջ վստահուած անձինք ունենալու համար, հարկաւոր է այն բնակավայրերում, որտեղ գտնուում են ընտրական տեղամասերը, ունենալ մշտական գործող քաղաքական թիմեր, որոնք տեղական մակարդակով քաղաքական գործունէություն են վարում: Իսկ այդ քաղաքական թիմերի գոյությունը պէտք է երեւայ տուեալ բնակավայրում ՏԻՄ ընտրություններին մասնակցութեամբ: Այսինքն՝ օրինակ, Արագածոտնի մարզի Ուջան գիւղում պէտք է լինի ընդդիմադիր կուսակցութեան տարածքային կազմակերպություն, այդ կազմակերպությունը պէտք է ունենայ լիզեր եւ խորհուրդ, այդ լիզերն ու խորհուրդը պէտք է ինդի ունենան մասնակցել եւ յաղթել համայնքի ղեկավարի եւ աւագանու անդամի ընտրություններում, որ իրենք իրենց բնակավայրի ընտրական տեղամասերում ձեւաւորեն վստահուած անձանց թիմեր, որպէսզի այդ նոյն թիմերը այդպիսի դերակատարում ստանան նաև համապետական ընտրություններում:

Էստեղ, ուրեմն, համուում ենք ինդրի էութեանը, որովհետև երբ այս իմաստով փորձում ենք հետազօտել փաստերը, հասկանում ենք, որ ընդդիմությունը՝ որպէս քաղաքական ինստիտուցիա, գրեթէ երբեք չի մասնակցել ՏԻՄ ընտրություններին, որովհետև չի ունեցել տարածքային կառուցներ: Կամ եթէ ունեցել է տարածքային կառուցներ, նախընտրել է ՏԻՄ ընտրություններին չմասնակցել, որովհետև կուսակցութեան վերնախաւը մտածել է, որ եթէ տարածքները որեւէ մէկի լիզերը դառնա որեւէ քաղաքի քաղաքապետ, նրա ազդեցությունը կուսակցութեան ներսում խիստ կը մեծանայ, նա կարող է կուսակցութեան ներսում էլ կարիերա անել, դառնալ հանրապետական մասշտաբի գործիչ: Իսկ էս դէպքում կուսակցութեան ղեկավարները հնարաւոր է կորցնեն այդ կարգավիճակը:

Եւ իրական քաղաքականություն ու իրական փոփոխությունները շատ դէպքերում ընդդիմադիրները գոհաբերել են յանուն կուսակցական բոսի իրենց կարգավիճակի, միայն թէ շաբաթը մի անգամ ինտերվիու տալու հնարաւորությունը չկորցնեն:

Իհարկէ, կան նաև այլ բարդություններ, երբ իշխանությունը խոչընդոտում, թոյլ չի տալիս տարածքային մարմինների ձեւաւորումը, կան ֆինանսական բարդություններ: Բայց եթէ իշխանութեան դիմադրությունը չես կարողանում կտրել Արագածոտնի մարզի Ուջան կամ որեւէ այլ մարզի որեւէ այլ գիւղում, ինչպէս ես դա կարողանալու անել Ազատության հրապարակում: Իշխանափոխութեան պրոցեսը չի սկսում եւ աւարտում Ազատության հրապարակում: Իշխանափոխութեան պրոցեսը Ուջան գիւղում սկսում է, Ազատութեան հրապարակում աւարտում: Եթէ սկսում է Ազատութեան հրապարակում, Ուջան գիւղում աւարտում է, որովհետև ուջանցի ցուցարարը յոգնած ու հիասթափուած գնում է իրենց տուն:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

Սահմանադրական գործընթացի լողացող կուրսը

ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

Հրապարակուել է Հայաստանի սահմանադրական փոփոխությունների ամբողջական նախագիծը, որի բովանդակությունը վկայում է առաջիկայ քաղաքական խորհրդակցություններում Սերժ Սարգսեանի «առեւտրային» նախատրամադրուածությունների մասին:

Ակնյայտ է, որ սահմանադրական փոփոխությունների նախագծով Սարգսեանը տեղեր է թողել քաղաքական ուժերի հետ, այսպէս ասած, բանակցությունների եւ պայմանաւորուածությունների արդիւնքում փոխելու համար՝ այդ ամէնի դիմաց ստանալով աջակցություն սահմանադրական գործընթացին:

Խորհրդակցություններն առաջիկայում մեկնարկելու են, եւ դրանց ընթացքով էլ պայմանաւորուած կը լինի այն վերջնական տեսքը, որ կը ստանայ Սահմանադրութեան փոփոխությունների նախագիծը հանրաքուէից առաջ: Սակայն կասկա-

Հաշուի առնելով այն իրողությունը, որ Հայաստանի շուրջ տեղի են ունենում դիմամիկ արտաքին զարգացումներ, անմիջականօրէն Հայաստանի սահմանների մօտ անգամ, Սերժ Սարգսեանը երեւի թէ սահմանադրական գործընթացում ինքն էլ չի շտապում կայացնել վերջնական որոշումներ

ձից վեր է նաև, որ փոփոխությունների առանցքային հանգամանք հանդիսացող իշխանական մոդելի վերաձեւումը ենթակայ չի լինելու այդ խորհրդակցություններին:

Ընդհանրապէս շատ դժուար է ասել, թէ արդեօք Սերժ Սարգսեանն այդ հարցում հակուած է որեւէ կոմպրոմիսի որեւէ ուժի հետ: Յամենայն դէպս, մինչև այսօր այդ տեսանկիւնից այնպիսի տպաւորություն է, որ սահմանադրական գործընթացում որեւէ դիրքորոշումով կամ միջանկեալ վիճակով ներգրաւուող ուժերը, եւ այս թւում նոյնիսկ ՀՀԿ-ն, մինչև վերջ չեն պատկերացրել ու չեն հասկանում, թէ ի վերջոյ ինչ է ուզում Սերժ Սարգսեանը, ի՞նչ է մտածել նա:

Հաշուի առնելով այն իրողությունը, որ Հայաստանի շուրջ տեղի են ունենում դիմամիկ արտաքին զարգացումներ, անմիջականօրէն Հայաստանի սահմանների մօտ անգամ, Սերժ Սարգսեանը երեւի թէ սահմանադրական գործընթացում ինքն էլ չի շտապում կայացնել վերջնական որոշումներ եւ աւելի հակուած կը լինի առաջ-

նորդուել իրավիճակի արտաքին զարգացմանը գուգահեռ ընթանալու տրամաբանութեամբ եւ սահմանադրական գործընթացում աւելի շատ լինել արտաքին իրողությունների արձագանքողի դերում: Խնդիրն այն է, որ այդ իրողությունները էական ազդեցություն են ունենալու եւ նոյնիսկ արդէն իսկ ունենում են ամբողջ կովկասեան տարածաշրջանի վրայ ե՛ւ ռազմաքաղաքական, ե՛ւ տնտեսական առումով: Իսկ սա էլ իր հերթին նշանակում է, որ արագօրէն կարող են փոխուել ե՛ւ մարտահրաւէյները, ե՛ւ անելիքները, ե՛ւ անգամ տարածաշրջանային ստատուս-քուոն:

Այս ամէնը չի կարող չազդել Հայաստանի վրայ: Աւելին՝ Հայաստանն ուղղակի ենթակայ է այս ամենին, ըստ որում՝ ինչպէս կովկասեան ցանկացած սուբիէկտ՝ ճանաչուած թէ չճանաչուած: Եւ այս իմաստով, իհարկէ, այնպիսի կարեւորագոյն ներքաղաքական եւ ներիշխանական գործընթացը, ինչպիսին Սահմանադրութեան փոփոխություններն են, չի կարող անցկացուել առանց արտաքին միջավայրը հաշուի առնելու: Իսկ եթէ արտաքին միջավայրը կայուն չէ, ապա սա նշանակում է, որ վերջնական ամրագրումներ չեն լինի նաև սահմանադրական գործընթացում, եւ այստեղ, իհարկէ, անցնող ժամանակահատուածին գուգահեռ հնարաւոր են նոյնիսկ ամենամասպասելի փոփոխություններ Սերժ Սարգսեանի քայլերում, որոնք մինչև անգամ կարող են բերել սահմանադրական փոփոխություններից հրաժարումի:

«ԺԱՄԱՆԱԿ ԵՐԵՒԱՆ»

ՄԱՍԻՍ
ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X) Published Weekly Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES: USA \$50.00, \$100.00 (First Class) Canada \$125.00 (Air Mail) Overseas \$250.00 (Air Mail). All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA. Please Send Address Change To MASSIS WEEKLY

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» ամպայմանօրէն չի բաժնեւորուող բոլոր միտքերը

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երկրորդ Փուլի Մասին Դրոյթը Իշխանութեան Մենաշնորհի Պահպանման Ուղի է

Իրաւապաշտպան Աւետիք Իշխանեանը կուսակցութիւնը սկզբունքորէն չեն հրաժարուում խորհրդարանական ընտրութիւններու երկրորդ փուլի մասին արմկայարոյց դրոյթից՝ չկատարելով անգամ վեներտիկի Յանձնաժողովի պահանջը:

«Ինչպէս կարող է լինել պսեղո ժողովրդավարութիւն կամ պսեղո նախագահական համակարգ եւ այլն, այնպէս էլ կարող է լինել պսեղո պառլամենտական համակարգ: Երկրորդ փուլ կոչուածը նշանակում է իշխանութեան մենաշնորհի պահպանում», - ասում է Իրաւապաշտպանը:

«Եթէ վերցնենք այսօրուայ Ազգային ժողովը, ապա Հանրապետական կուսակցութիւնը մեծամասնութիւն կազմել է մեծամասնականի շնորհիւ: Այսինքն պատկերացրէք, որ դասական պառլամենտարիզմի ժամանակ համամասնական ընտրութիւններով բացարձակ կեղծիքները շատ ակնառու կը լինեն: Նրանք չեն ուզում բացարձակ կեղծիքներ անել, դրա համար մտածել են բաւական խորամանկ ձև, այն է՝ առաջին փուլից յետոյ միեւնոյն է Հանրապետականը իր լծակներն օգտագործելով կը լինի առաջին տեղում, բայց ոչ բացարձակ մեծամասնութեամբ, իսկ երկրորդ փուլում արդէն կարող են այնքան կեղծել, որքան անհրաժեշտ է բացարձակ մեծամասնութիւն ունենալու համար», - նշեց Իշխանեանը: «Թրանսփարենտի ինթեր-

նեյշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի իրաւախորհրդատու Հերիքնազ Տիրգրանեանը շարունակում է՝ չհանձնելով իշխանութիւնները բացառուելու են իրենց մտադրութիւնը. փոփոխութիւնների միակնպատակ կալունն մեծամասնութեան ապահովումն է:

«Փաստօրէն Սահմանադրութիւնում ամբողջում է այն, ինչն այսօր մենք ունենք մեր երկրում: Ըստ էութեան, գաղտնիք չէ, որ մեր քաղաքական ներկայակալը շատ տարբեր գոյներ չունի, կայ միակուսակցական կառավարում, եւ դա ամբողջում է Սահմանադրութեամբ: Երկրորդ փուլ մտցնելու գաղափարը ի չիք է դարձնում կուսակցութիւնները խոշորացնելու, կուսակցական դաշտը բազմազան դարձնելու բոլոր հնարաւորութիւնները, փոխարէնը ստեղծում է մէկ գերիշխող կուսակցութիւն եւ գուցէ մէկ արբանյակային կուսակցութիւն, որի հետ կը գնայ երկրորդ փուլ, իսկ դա ի վերջոյ կը հանգեցնի միակուսակցական համակարգի», - ասաց Տիրգրանեանը:

Իրաւապաշտպան Արթուր Սաքունցը յստակեցնում է իշխանութիւնների սցենարը՝ արդէն անուններ հնչեցնելով՝ «Նախագահական ժամկէտը լրանում է, եւ այլ թեկնածու, որը կարող է թիմը ներկայացնել, չեն գտնում կամ չեն վստահում, եւ որպէսզի այդ ձեւով խմբային, բայց իրականում բովանդակութեամբ անձի իշխանութիւնը ապահովեն, դա հենց այդ երկրորդ փուլի միջոցով է»:

Լեւոն Զուրաբեան. «Սերժ Սարգսեանը Առաջարկել է Խորհրդակցութիւններ Սկսել ԶԱԿ-ի Զետ

Ըստ Հայաստանի Հանրապետական կուսակցութեան ծրագրի՝ 2017 թ. սահմանադրական հանրաքուէից յետոյ կանցնեն խորհրդարանական ընտրութիւններ, որտեղ կ'ընտրուի Ազգային ժողովի նախագահ, որն իրականում Սերժ Սարգսեանը չի լինի: Այս մասին Օգոստոսի 25-ին՝ վեներտիկի յանձնաժողովի անդամների հետ Հայաստանի քաղաքական կուսակցութիւնների խորհրդարանական խմբակցութիւնների ներկայացուցիչները հանդիպումից յետոյ, յայտարարել է Հայ ազգային գոնկրէս խորհրդարանական խմբակցութեան նախագահ Լեւոն Զուրաբեանը:



ՀԱԿ խմբակցութեան նախագահ Լեւոն Զուրաբեան

Պատասխանելով NEWS.am-ի թղթակցի այն դիտարկմանը, որ Սերժ Սարգսեանը բազմիցս յայտարարել է, որ մտադիր չէ իր թեկնածութիւնն առաջադրել ՀՀ վարչապետի ու Ազգային ժողովի նախագահի պաշտօնին, Լեւոն Զուրաբեանը շեշտել է. «Սերժ Սարգսեանի ծրագիրն ուրիշ է. երբ աւարտուի նրա նախագահական ժամկէտը՝ նա կը դառնայ Ազգային ժողովի նախագահ: Հենց դա է նրա ամբողջ ծրագիրը»:

Պատգամաւորը նաեւ շեշտել է, որ իրեն գանգահարել է նախագահ Սերժ Սարգսեանի աշխատակազմի ղեկավար Վիգէն Սարգսեանը ու Սերժ Սարգսեանի անունից փոխանցել է՝ Չորեքշաբթի օրը

քաղաքական ուժերի՝ մասնաւորապէս Հայ ազգային գոնկրէսի հետ խորհրդակցութիւններ սկսելու առաջարկը: «Ես ասացի, որ մենք լաւ հասկանում ենք այդ ամբողջ սահմանադրական գործընթացի նպատակը: Այդ նպատակը մենք անընդունելի ենք համարում: Եւ մենք վստահ ենք, որ այդ տեսակետից որեւէ խօսակցութիւն անիմաստ է, քանի որ այդ նպատակը միեւնոյն է չի փոխուի», - ընդգծել է Լեւոն Զուրաբեանը: Յիշեցնենք, որ Հայաստանի սահմանադրական բարեփոխումների նախագծի ամբողջական տեքստն արդէն ուղարկուել է խորհրդարան: Ըստ այդ բարեփոխումների՝ երկրում հաստատուելու է կառավարման խորհրդարանական ձև:

Կազինոն Կը Կառուցուի Համալիրի Շէնքից Դուրս

Մարզահամերգային համալիրի ներսում խաղատուն չի լինի, սակայն տարածքում կը կառուցուի խաղատուն: Պետական գոյքի կառավարման վարչութեան նախագահ Արման Սահակեանը դժուարութեամբ խոստովանեց այս փաստը. «Մենք պիտի ամէն ինչ անենք, որ կարողանանք ապահովել ֆինանսական հուրքեր Մարզահամերգային համալիրի պահպանման եւ բնականոն գործունէութիւնն ապահովելու համար»:



Մարզահամերգային համալիրը Երեւանի մէջ

Հայաստանի օրէնքները չեն արգելում խաղատուն կառուցել Երեւանի կենտրոնում, եթէ կառուցողը կատարում է 100 միլիոն դոլարի ներդրում, - վստահեցնում է պետական պաշտօնեան: Բայց ինչի՞ էք կպել խաղատնից, - գարմանում է նա. «Ինչու՞ չէք խօսում ջրաշխարհից, ինչու՞ չէք խօսում հիւրանոցային համալիրից, ինչու՞ չէք խօսում, որ բոլոր էդ կառուցները ֆինանսական ներարկումներ են անելու համալիրի պահպանութեան մասին»:

Նախագահ Մկրտիչ Մինասեանը չի գարմանում խաղատուն բացելու մտքից, նա ասում է՝ գոնէ մինչեւ յայտարարելը ժողովրդի հետ քննարկէիք. «Երեւի դիտեն, որ քննարկման ժամանակ կը բարձրացուէին էնպիսի հարցեր, որոնք կը դադարացնէին ասենք թէ էդ ներդրումները»:

Պարոն Մինասեանը գիտի, թէ ինչ է նշանակում 100 միլիոն դոլարի ներդրումը, դա իսկապէս բերաններ է փակում. «Բայց ամէն տեղ չի, որ դա պէտք ա էդպէս նայել եւ հետազոտել համաձայնուել»:

Պաշտօնեան յիշեցնում է, որ խաղատունը Ծիծեռնակաբերդի յուշահամալիրի մօտ չի լինելու, այլ համալիրից դէպի Լենինգրադեան փողոց հատուածում, որտեղ այսօր էլ առևտրային այլ օբեկտներ կան. բենզալցակառանից սկսած մինչեւ ծաղկի սրահներ, մինչեւ ժամանցի կենտրոններ:

Այսօր պարոն Մինասեանը տպաւորութիւն ունի, որ կառավարութիւնը չի վստահում ժողովրդին. «Ժողովուրդն էլ զգում է, որ էստեղ էլ իրեն անտեսեցին եւ փոխադարձ անվստահութիւնը պատրաստ է»:

Կարող էր ճարտարապետների միութիւնը դատի տալ կառավարութեանը, սակայն դրա համար ռեսուրսներ եւ ուրիշ մտածելակերպ է պէտք:

Ճարտարապետների միութեան

Յունաբնակ Մադան Գիւղը Գրեթէ Դատարկ է

Լ ո ո ո ւ մարզի առաւելապէս յունաբնակ Մադան գիւղի երբեմնի ե ո ա յ ա ը կ դպրոցի շէնքից այժմ միայն մի պատ է մնացել: Դատարկուած գիւղում միայնակ մնացած յուն ծերունիներն ափսոսանքով պատմում են, որ տարիներ առաջ քաղաքներից «մեծաւորներն են եկել», հակա չէնքը շինանիւթի վերածելու վաճառել:



Տեսարան Լոռու մարզի յունաբնակ Մադան գիւղէն

Դպրոցի շէնքը քանդելու եւ վաճառելու համար ոչ ոք պատահան չի տուել: Պատասխանատուութիւն չեն էլ պահանջել, քանի որ գիւղի իրական տէրերն այլեւս այստեղ չեն: Դեռ 20 տարի առաջ աւելի քան 1000 մարդ թողել է տասնամեակներով ստեղծած տուն ու տեղն ու արտագաղթել: Հիմնականում Յունաստան:

Տեսարան Լոռու մարզի յունաբնակ Մադան գիւղէն

«90-ականներին Յունաստանի կառավարութիւնը հայաստանցի յոյներին տուն ու տեղով ապահովում էր, աշխատանք տալիս, էս ժողովուրդը բրախել են տները, վեշը, ամէն բան ու հայդէ գնացել են: Յետոյ, որ իրանք գնացել են, վիզա են ուղարկել, ասենք թէ՛ մեզ, քեզ, իրան, կամաց-կամաց գնացել են: Ու Մադանը դրդակուել ա», - պատմում է Միխայիլ Կոտանովը: Մադանեցիները ցաւով նշում են, որ այսօր էլ լքուած տներն են դպրոցի շէնքի նման շինանիւթի վերածում եւ 150-200 դոլարի դիմաց վաճառում: Նախկին տէրերը տներից մի քանիսը փրկելու համար անյատոյց տուել են տան կարիք ունեցող ծանօթբարեկամներին, պայմանով, որ աչքի լոյսի պէս պահեն իրենց ունեցուածքը: 90-ամեայ վարվառ Ապոստոլովան Մադանում մնացած եզակի յոյներից է: Իր մաշկի վրայ է գգում դատարկուած գիւղի դժուարութիւնները: Անտառի փեշին գտնուող գիւղում նորմալ ապրելու ոչ մի պայման չունեն: Ծեր կինը, չնայած հարազատներ ունի Յունաստանում, բայց ծննդավայրը լքելու մասին չի մտածում: «Գնամ Յունաստան ի՞նչ անեմ: Զահել չեմ՝ գնամ աշխատեմ: Ասում է՝ մայրենի յունարէնով խօսելու համար գիւղում է համարեա գրուցակից չունի: Բայց համոզուած է՝ մինչեւ կեանքի վերջ լեզուն չի մոռանայ:

Մարզահամերգային համալիրի ներսում խաղատուն չի լինի, սակայն տարածքում կը կառուցուի խաղատուն: Պետական գոյքի կառավարման վարչութեան նախագահ Արման Սահակեանը դժուարութեամբ խոստովանեց այս փաստը. «Մենք պիտի ամէն ինչ անենք, որ կարողանանք ապահովել ֆինանսական հուրքեր Մարզահամերգային համալիրի պահպանման եւ բնականոն գործունէութիւնն ապահովելու համար»:

ԼՈՒՐԵՐ

ԱՄՆ Դեսպան.

«Պատրաստ ենք ՅՅ կառավարութեանն Օգնել Կոռուպցիայի Դեմ Պայքարում»

ԱՄՆ-ն պատրաստ է Հայաստանի կառավարութեանն օգնել կոռուպցիայի դեմ պայքարում: Այս մասին Օգոստոսի 25-ին, «114 սոցիալական թէժ գիծ» ծառայութեան 3-ամեայ աշխատանքի արդիւնքներին նուիրուած միջոցառման ժամանակ լրագրողների հետ զրոյցում ասաց Հայաստանում ԱՄՆ դեսպան Ռիչըրտ Միլսը:



ԱՄՆ դեսպան Ռիչըրտ Միլս

Դեսպանի խօսքով՝ ներդրուած ծառայութեան նպատակն է ՀՀ քաղաքացիների շրջանում ձեւաւորել վստահութիւն սոցիալական պաշտպանութեան համակարգերի նկատմամբ:

«Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիներն այս համակարգի միջոցով ոչ միայն իրագեկում են իրենց իրաւունքների մասին, այլեւ յայտնում են չարաչառմաների, խախտումների մասին, այդ թւում անհատների կողմից նկատուող խախտումները: ԱՄՆ-ն պատրաստ է աշխատել Հայաստանի կառավարութեան հետ՝ կոռուպցիայի դեմ պայքարում», - ասաց դեսպանը:

սին, այդ թւում անհատների կողմից նկատուող խախտումները: ԱՄՆ-ն պատրաստ է աշխատել Հայաստանի կառավարութեան հետ՝ կոռուպցիայի դեմ պայքարում», - ասաց դեսպանը:

Հայաստանը Եւրոպացի Ծամբորդողների Սիրելի Վայրն Է Դարձել

20-րդ դարում պատերազմներից ծուլատուած բազմաթիւ շրջաններ հրաշալիօրէն վերականգնուել են՝ կոտորածի վայրից վերածուելով հանգստի եւ ժամանցի վայրի: Այս մասին «Fox News»-ի կայքում գրել է լրագրող Քեթի Ջեքսոնը՝ իր ցանկում ներառելով Կոլումբիան, Հարաւային Աֆրիկան, Նիկարագուան, Հիւսիսային Իռլանտիան, Ռուանդան, Խորվաթիան, Հայաստանը, Մեանման եւ Ճամայքան:

Ծամբորդողների սիրելի վայրն է դարձել: Անցեալ տարի արտասահմանեան զբօսաշրջիկների թիւը հասել է 1.2 միլիոնի՝ նախորդ տարուայ համեմատ աճելով 11.3%-ով»,- նշում է յօդուածում:

Ինչ վերաբերում է Հայաստանին, լրագրողը նշել է, որ երկիրը բազմաթիւ ցնցումներ է տեսել, իսկ մայրաքաղաք Երեւանը յաճախ ձեռքից ձեռք է անցել, բայց ժողովուրդն ամենից շատ յիշում է 1915-1918 թուականների Հայոց ցեղասպանութեան սարսփները:

Հեղինակը յաւելել է, որ լեռնային տեղանքն արշաւների եւ բացօթեայ միջոցառումների հրաշալի հնարաւորութիւն է ընձեռում: «Ինչ վերաբերում է մշակուցային, ապա քրիստոնէութիւնն առաջինը որպէս պետական կրօն ընդունած երկիրը կարող է պարծենալ բազմաթիւ տաճարներով եւ վանքերով, ուր կարելի է անվճար այցելել: Բացի այդ, հասանելի գներով կարելի է օգտուել հասարակական տրանսպորտից, մարդկանց կուտակումներ գրեթէ չեն լինում, մնացեալ ամէն ինչ նոյնպէս է ժամ է», - գրել է լրագրողը:

«Այսօր Հայաստանը սահմանափակ պիւտձէ ունեցող եւրոպացի

Տնտեսագետը Չի Բացառում Դրամի Հետագայ Արժեզրկումը

Երեւանի փոխանակման կէտերում եւ բանկերում ամբերիկեան դոլարը հասել է վերջին մի քանի ամիսների ընթացքում ամենաբարձր ցուցանիշին՝ գնում են 483 դրամով, վաճառում՝ 488-ով:

Թեր էին նկատուած, բայց միջազգային արժույթի պակաս չկար, դոլար յաջողում էր գնել բոլորին: Փոխանակման կէտերում նշում էին՝ ստիպուած են դոլարը 488 դրամով վաճառում, Կենտրոնական Բանկը թոյլ չի տալիս աւելի բարձր գին սահմանել:

Տնտեսագէտ Արտակ Մանուկեանի կարծիքով՝ փոխարժէքի ներկայիս շեմն արհեստական է, միջազգային բորսաներում տիրող անորոշութեան հետեւանքով առաջիկայում դրամը կարող է եւս մի քանի տոկոսով արժեզրկուել:

«Աւել են, որ սենց դրէք կուրսը, չբարձրացնէք», - նշեց փոխանակման կէտերից մէկը աշխատակիցը:

«Տնտեսագիտութեան տեսութեան մէջ տարբերակում են անուանական եւ իրական փոխարժէք հասակացողութիւնները: Եթէ մենք փորձենք իրական փոխարժէքը ստանալ, կը հասկանանք, որ այն առնուազն պէտք է 500 դրամից բարձր լինի: Հիմա ինչ-ինչ նկատուումներից, այդ թւում՝ սոցիալական նկատուումներից ելնելով կենտրոնական Բանկը արհեստականօրէն փորձում է իրար չմօտեցնել անուանական եւ իրական փոխարժէքները», - «Ազատութեանը» ասաց տնտեսագէտը:

Սակայն Կենտրոնական Բանկի լրատուութեան բաժնից հերքեցին դոլարի գինը վերահսկելու մասին պնդումները՝ յաւելելով, որ փոխարժէքը համապատասխանում է իրավիճակին:

Տարադրամի փոխանակման կէտեր եւ բանկեր «Ազատութեան» այցելութեան ժամանակ զանազապահանջներ մօտ թէեւ փոքրիկ հեր-

Մասնագիտութեամբ տնտեսագէտ, հանրապետական Գազիկ Մինասեանը դժուարանում է ասել փոխարժէքի ներկայիս կուրսն արհեստական է պահպանում, թէ՛ ոչ, սակայն բնական է համարում դրամի արժեզրկումը:

«Ամբողջ աշխարհում են այս տենդենցները, դրամք գլոբալ են՝ Զինաստանից մինչեւ Ռուսաստանը: Ամբողջ աշխարհի տենդենցներից Հայաստանը հեռու մնալ չի կարող», - ասաց պատգամաւորը:

Պաշտօնական վիճակագրու-

Խորհրդարանական Ուժերը Սարգսեանի Հետ Քննարկում Են Սահմանադրական Փոփոխութիւնները

«Կայուն մեծամասնութիւնն ապահովելու նպատակով խորհրդարանական ընտրութիւնների երկրորդ փուլ անցկացնելու մասին դրոյթը Սահմանադրութեան նախագծից չի հանուի, բայց աւելի կը յստակեցուի», - «Ազատութեան» հետ զրոյցում ասաց Սահմանադրական փոփոխութիւնների հարցով Սերժ Սարգսեանին հանդիպած ՀՅԴ ներկայացուցիչ Արմէն Ռուստամեանը:

րդ յօդուածը, որը ես եմ բարձրաձայնել: Դա ընտրիչների համակարգի խնդիրն է: Եւ տեղական ինքնակառավարման մարմիններից ընտրիչների հանելու խնդիրը, որը այսօր եւս քննարկուել է Հանրապետութեան նախագահի մօտ: Ես այլ փակագծեր չեմ ուզում այս պահին բացել, բայց ասեմ, որ բաւականին արդիւնաւէտ հանդիպում էր, եւ ես կարծում եմ, որ այս տեմպերով մենք պէտք է շարժուենք առաջ»:

Թէ՛ նախապէս յայտնած գնահատականում, թէ՛ վերջին երկու օրերի երեւանեան քննարկումների ընթացքում վեներիկի յանձնաժողովի փորձագէտներն առաջարկում էին նախագծից ընդհանրապէս հանել այդ դրոյթը:

Կայուն մեծամասնութեան ձեւաւորման դրոյթը, Բաբեանի խօսքով, ԲՀԿ-ի համար էլ է մտահոգիչ: Թէ՛ յատկապէս ինչո՞վ՝ չմանրամասնեց՝ ասելով, որ չի ցանկանում մասնագիտական քննարկումներ ծաւալել: Բայց յստակ է՝ ԲՀԿ-ն այլեւս Սերժ Սարգսեանի ղեկավարած Հանրապետականի վերարտադրութեան վտանգ չի տեսնում - «Եղել են յայտարարութիւններ, որոնցից յետոյ արդէն պարզ է, որ նման խնդիր չկայ, եւ վերարտադրութեան հետ կապուած մենք չունենք ասելիք: Որովհետեւ այդ հարցը մեր համար պարզ է, որ վերարտադրութեան այդ բաղադրիչը դուրս է գալիս ասպարէզից: Ես չեմ ցանկանում այս պահին մեկնաբանել տարբեր պաշտօնեաների եւ ղեկավարութեան տեսակէտները այդ հարցի շուրջ: Ես ցանկանում եմ ընդամենը տեղեկացնել ձեզ, որ մեր մօտ այդ հարցի շուրջ կայ փոփոխութիւն, եւ այդ փոփոխութիւնը գալիս է նաեւ իրենց արած յայտարարութիւններից»:

«Մասնաւորապէս, յստակ լինի, որ խօսքը գնում է կողմնակից հնարաւորութեան մասին առաջին փուլից յետոյ: Երկրորդ փուլն էլ նոր դաշինքներով կարող է ձեւաւորուել, որը ներկայացուցչական ժողովրդավարութեան քաջալերման լաւ ձեւերից է: Այ դրա վրայ արդէն կարելի է ընտրական օրէնսգրքում բոլոր մանրամասները սահմանել», - նշեց Ռուստամեանը:

Դեռ մի քանի ամիս առաջ անգամ բովանդակային քննարկումները մերժող ԲՀԿ-ն այսօր չի բացառում, որ կը միանայ «այո»-ի քարոզարշաւին - «Լիարժէքօրէն ուսումնասիրելով վերջնական փաթեթը եւ բերելով մեր առաջարկութիւնները ասպարէզ, քննարկելով՝ մենք գալիս ենք այն տեսակետին, որ կարող ենք ստեղծել մի այնպիսի փաստաթուղթ, որը իրականում ընդունելի դառնայ հասարակութեան եւ մեր երկրի կողմից»:

Նախագահի հետ հանդիպած քաղաքական ուժերից միայն ՀՅԴ-ն է իր հաստատ «այո»-ն ասում Սահմանադրական բարեփոխումների: Դաշնակցութեան տեսանկիւնից, Ռուստամեանի փոխանցմամբ, հիմնական գործն աւարտուած է, մնացել են վերջին շտկումները - «Մասնաւորապէս, խօսեցինք այսօր ընտրիչների հարցի հետ կապուած, որովհետեւ մենք դրան կողմ էինք միայն այն պատճառով, որ մտածում էինք՝ դա հնարաւորութիւն կը տայ Սփիւռքը ընդգրկել: Բայց համապատասխան մեխանիզմ, դժբախտաբար, դեռ չկարողացանք գտնել: Եւ այդ պարագայում ընտրիչների ժողովը պահպանելը անիմաստ է դառնում: Ճիշդ կը լինի, որ նախագահը ընտրուի միանգամից Ազգային ժողովի կողմից, որ այս խօսակցութիւններն էլ այդ առումով, շահարկումներն էլ դադարեն»:

«Օրինաց Երկիր» կուսակցութիւնը Բաղրամեան 26 էր գնացել «Հայկական վերածնունդ»-ի առաջարկներով: Նախագահական մտնելուց առաջ Յովհաննէս Մարգարեանն ասաց - «Հինգ մեր կոնցեպտուալ առաջարկները եղել են հայեցակարգի վերաբերեալ: Հիմա կայ նախագիծ, մենք նախագծի վերաբերեալ էլ ունենք երեսունից աւելի առաջարկներ: Հիմա այդ հինգ առաջարկների մասին է խօսքը: Աւելի մանրամասն քննարկումից յետոյ կ'անդրադառնանք»:

«Բարգաւաճ Հայաստան»-ը 5 հոգանոց խմբով էր գնացել նախագահական, Սերժ Սարգսեանի հետ հանդիպումը կուսակցութեան մամուլի խօսնակ Վահան Բաբեանը դրական գնահատեց՝ նշելով, որ իրենց առաջարկութիւնների հիմնական մասն ընդունուած է նախագահի կողմից - «Կայ անստույթիւնների մասին խնդիր, ինքնաբերական հաւաքների մասին հարցը, որովհետեւ դա մեր մտահոգութիւնների մէջ է մտնում, նաեւ 125-

Վեներիկի Յանձնաժողով

Շարունակուած էջ 1-էն

խորհրդատուական բնոյթ ունի. «Մենք փոխտրեւրօ չենք: Մենք անկախ փորձագէտներ ենք եւ խորհրդատուութիւն կը տրամադրենք, հասկցէք, որ վեներիկի Յանձնաժողովը հրամայող կառույց չէ»:

բերին, իրենց լիազուծմար նիստի ընթացքին:

Միւլենոյն ժամանակ էնդգինս շեշտեց որ, իրենց կարծիքը զուտ

մատ պակասել են մօտ 25 տոկոսով՝ 2 միլիարդ 20 միլիոն դոլարից հասնելով 1 միլիարդ 537 միլիոնի:

թեան համաձայն՝ Հայաստանի միջազգային պահուստները նախորդ նոյն ժամանակահատուածի համե-

ԱՄՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՅԵԼԻ ԱԴԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ՇԻՐՄԱՔԱՐԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՈՒԷԼ ԵՆ ՈՐՊԷՍ ԴԻՏԱՅՈՐԵՐԻ ԿՎՓԱՐԻՉՆԵՐ



Թուրքիայի Մալքարա քաղաքում հայկական շիրմաքարերն օգտագործուել են որպես կոյուղու դիտահորերի կափարիչներ: Մալքարա քաղաքը գտնվում է Ստամբուլից 190 կմ հեռավորության վրայ:

Թուրքական TESKI ջրամատակարարող ընկերության աշխատակիցները շիրմաքարերը պատահաբար յայտնաբերել են քաղաքի թաղամասերից մէկում՝ շինարարական աշխատանքների ժամանակ: Բանկորները յայտնաբերել են 7 գերեզմանաքար եւ անմիջապես տեղեկացրել քաղաքապետարանին, «Ակոս» շաբաթաթերթին յղումով գրում է PAN ARMENIAN.NET-ը: Քաղաքապետարանը գերեզմանաքարերը ուսումնասիրման եւ պահպանման նպատակով փոխանցել է Թեքիրդաղի հնագիտության թանգարանին:

Օգոստոսի 17-ին Թուրքիայի Եւրոպական հատուածում գտնուող Թեքիրդաղ նահանգի Մալքարա գաւառում ջրի խողովակների վերանորոգման համար փորուած փոսում 1,5 մ խորութեան վրայ յայտնաբերուել են 8 հայկական շիրմաքար: Տեղի բնակիչներից մէկը՝ Լեւանթ Բաջըն յայտնել է, թէ վաղը, որտեղ գտել են շիրմաքարերը, նախկինում հայկական գերեզմանոց է եղել:

2015-ի Ապրիլի տեղեկութիւններով, Թուրքիայի մայրաքաղաք Անկարայում հայերից մնացած հին գերեզմանատունն աւերում են զանազան ուժերը: Գերեզմանները նրանց կողմից պղծուել են: 2008-ին վանդալիզմի հերթական դէպք է արձանագրուել էրիւրնեգաբուի հայկական գերեզմանատանը եւ անյայտ անձինք ջարդել են մի դամբանաքար եւ տապալել 8 գերեզմանաքար: Նոյնաման դէպք էրիւրնեգաբուի գերեզմանատանը տեղի էր

ունեցել 2008-ի Հոկտեմբերի վերջին, երբ անյայտ անձինք ջարդել էին 12 դամբանաքար:

2012-ին յայտնի դարձաւ էրուհ շրջանում աւտոճանապարհի շինարարութեան ժամանակ հայկական գերեզմանատունը քանդելու եւ մարդկային ոսկորները հողի վրայ թողնելու դէպքի մասին: Թուրքիայի մշակույթի եւ զբօսաշրջութեան նախարարութիւնից պատճառաբանել են. «Գերեզմանատունն անշարժ մշակութային կոթող է եւ մեզ չի հետաքրքրում: 2013-ին թուրքական «Ռադիօալ»-ը գրեց, որ Թուրքիայի եւրոպական հատուածում գտնուող Թեքիրդաղ նահանգի Մալքարա շրջանի հայկական գերեզմանատունն պղծուել է եւ ամբողջովին ոչնչացուել: Մալքարայի ինքնակառավարման մարմինները հայկական գերեզմանատան տարածքը յատկացրել են շինարարութեան համար: Մասնաւորապէս, հայկական գերեզմանատան տարածքում կառուցուելու է հացատուն եւ հիւրատուն:

2014-ի Յուլիսին «Ակոս»-ը գրեց, որ Սիվասի (հայկական Սեբաստիա) շրջանի Ջարա գաւառում գտնուող հայկական գերեզմանատանից մնացել է միայն մէկ տապանաքար: Տեղեկութիւններ են տարածուել նաեւ թուրքական թունջելի շրջանի Մազկերտ թաղամասի հայկական գերեզմանատանը փոսեր փորելու մասին:

Թուրքիայի հիմնադրամների գլխաւոր վարչութիւնը Ստամբուլի հայաշատ Շիշլի թաղամասում գտնուող հայկական գերեզմանոցի սեփականութեան իրաւունքը 2015-ի փետրուարին վերադարձրել է Բէյօղլուի «Երեք խորան» հայկական եկեղեցու հիմնադրամին Հետազոտութիւն՝ Յեղասպանութեան ժամանակ հայերին օգնութեան ձեռք մեկնած թուրքերի մասին...

ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՅԵՐԻՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՁԵՌՔ ՄԵԿՆԱԾ ԹՈՒՐՔԵՐԻ ՄԱՍԻՆ



Ռաուլ Վալենբերգի միջագային հիմնադրամը եւ Քլարկի համալսարանի Հոլոքոստի եւ ցեղասպանութեան ուսումնասիրութեան Սթրասլեր կենտրոնի Գալուստեան/Մուգար ամբիոնը, պրոֆեսոր Թաներ Աքչամի հետ նախաձեռնել են մի մեծ հետազոտութիւն:

Այս ընդարձակ հետազոտութեան նպատակը այն թուրքերի եւ քրդերի մասին տեղեկութիւններ հաւաքելն է, ովքեր օգնութեան ձեռք են մեկնել Հայոց ցեղասպանութեան զոհերին:

Ռաուլ Վալենբերգի միջագային հիմնադրամի հիմնական առաքելութիւնն է բացայայտել փրկութեան եւ համերաշխութեան մասին չպատմուած պատմութիւնները: Մուսուլման փրկիչների հարցը, ովքեր ամէն ջանք գործադրել են 20-րդ դարի սկզբում հայերին փրկելու համար, չուսումնասիրուած սպարէզ է, որ դեռ պետք է բացայայտուի, նշում է հիմնադրամի կազմում տեղադրուած գեկոյցի նախաբանում:

«Մեզ համար մեծ պատիւ է մեր ուժերը միաւորել աշխարհահռչակ թուրք պատմաբան եւ սոցիոլոգ Թաներ Աքչամի հետ, ով ջանք էր խնայել՝ փորձելով իրար համապատասխանեցնել հայերի եւ թուրքերի պատմաձեւերը, ինչպես նաեւ Քլարկի համալսարանի Հոլոքոստի եւ ցեղասպանութեան Սթրասլեր կենտրոնի նրա ամբիոնի հետ:

Սա իւրատեսակ փորձ է գտնելու եւ մեծարելու այն բազմաթիւ թուրքերին եւ քրդերին, ովքեր

օգնութեան ձեռք են մեկնել իրենց հայ հարեւաններին, մարդկութեան ամենամութ ժամանակաշրջաններից մէկում: Վալենբերգի հիմնադրամը նոյնը անում է Հոլոքոստի հետ կապուած:

Չարիքի վրա կենտրոնանալու փոխարեն մեր ՀԿ-ն ձգտում է ընդգծել այն կանանց եւ տղամարդկանց համերաշխութեան ոգին, ովքեր յաճախ վտանգի են ենթարկել իրենց սեփական կեանքը՝ միւսներին փրկելու համար: Սա մեր պարտքն է այդ փրկիչների առջեւ եւ ամէնից առաջ մեր պարտաւորութիւնը երիտասարդ սերնդի առջեւ, որը պէտք է տեղեկ լինի այս օրինակների մասին:

Այս առնչութեամբ իրականացուած հետազոտութիւնը մանրակրկիտ ձեւով եւ ջանասիրաբար իրականացուել է մասնատական (թուրքական եւ քրդական) նահանգներում, որտեղ տեղի են ունեցել ամենաշատ սպանութիւնները եւ որտեղ պատմութիւնների մեծ մասը սերնդէ սերունդ են փոխանցուել բանաւոր կերպով:

Ինչպէս խոստացել էինք, ուսումնասիրութիւնը հիմա արդէն հրատարակուած եւ ներկայացուած է հանրութեան դատին, որպէսզի մասնագէտները եւ հասարակ ընթերցողները կարողանան ծանօթանալ դրան եւ իրենց կարծիքը յայտնել:

Բարութեան ճանաչումը մեր առաքելութեան հիմնասիւններից է, եւ մենք վստահ ենք, որ այս մանրագնին ուսումնասիրութիւնը մեզ թոյլ կը տայ նոր անուններ աւելացնել փրկիչների ցանկում»:

«100 ԿԵԱՆՔ»-Ի ՀԱՄԱՐԻՄԱԿԻՐՆԵՐԸ ԴԻՍԵԼ ԵՆ ՄԱԿ-Ի ԳԼԽԱԲՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ

«100 կեանք» («100 Lives») նախաձեռնութեան համահիմնադիրներ Ռուբէն Վարդանեանը, Նուբար Աֆէյեանը եւ Վարդան Գրեգորեանը բաց նամակով դիմել են Միաւորուած Ազգերի Կազմակերպութեան Գլխաւոր քարտուղար Բան Կի-Մունին՝ միանալով Մարդասիրութեան համաշխարհային օրուայ կապակցութեամբ մեկնարկած ՄԱԿ-ի քարոզարշաւին, տեղեկացնում է «Մեդիաթա»-ը:

Նամակում մասնաւորապէս ասուած է. «Սորին յարգանքով ու երախտագիտութեամբ միանում ենք

Ձեզ՝ Մարդասիրութեան համաշխարհային օրուայ առիթով յարգանքի տուրք մատուցելու եւ ոգեկոչելու այն մարդասէրների յիշատակը, ովքեր իրենց կեանքը զոհեցին աշխատանքային պարտականութիւններն իրականացնելիս:

Երեքիս համար այս օրուայ խորհուրդը խիստ անձնական է: Որպէս հայ՝ մենք անչափ շնորհակալ ենք այն անհատներին, ում հերոսական գործողութիւնները կեանքեր են փրկել Հայոց ցեղասպանութեան ժամանակ: Նրանց, ինչպէս եւ ՄԱԿ-ի յատուկ ներկա-

յացուցիչ Սերիսի Վիերիա դէ Մելոյի խիզախ ժառանգութիւնը հրաշալի խթան է հանդիսացել շատերի համար՝ մարդասիրութեան ոլորտում աշխատելու եւ ոգեւորելու է մեզ՝ ճանաչելու այն զոհողութիւնները, որոնց շատերը դիմել են՝ կեանքեր փրկելու համար:

Պարտականութեան ու գնահատանքի խորը զգացումից ելնելով՝ մենք հիմնադրեցինք «100 LIVES» նախաձեռնութիւնը՝ յիշելու ու արժանին մատուցելու այն անհատներին, որոնց անձնուրաց գործողութիւնները կեանքեր փրկեցին 100 տարի առաջ: Այս նախաձեռնութիւնը ձգտում է կիսուել թէ՛ փրկողների, եւ թէ՛ փրկուածների ուշագրաւ պատմութիւններով, ինչպէս նաեւ արժանին մատուցել մարդկային ոգու տոկունութեանը:

Որպէս նախաձեռնութեան մաս՝ մենք ստեղծել ենք համաշխարհա-

յին նոր՝ Մարդկութեան զարթոնքի «Աւրորա» մրցանակը, որը իւրաքանչիւր տարի կը շնորհուի այն մարդասէրներին, ովքեր իրենց կեանքը վտանգի են ենթարկել՝ ուրիշներին գոյատեւելու ու բարգաւաճելու հնարաւորութիւն ընձեռելու համար: Մրցանակակիրը կը ստանայ 100 000 ԱՄՆ տոլարի չափով դրամական պարգեւ, ինչպէս նաեւ 1 մլն ԱՄՆ տոլար դրամաշնորհ կը տրուի այն բարեգործական կազմակերպութեանը, որը ոգեւորել է նրան՝ կատարել այդ արարքը:

Այս տարի, Մարդասիրութեան համաշխարհային օրուան նուիրուած ՄԱԿ-ի քարոզարշաւը լոյս է սփռում ամբողջ աշխարհի մարդասիրական արարքների վրայ եւ ներկայացնում է Մարդասիրական անվեհեր Հերոսներին: «Աւրորա»

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԿԼՈՊԱԿԱՆ ԱՌՃԱԿԱՏՈՒՄԸ ԵՎ ԵՐԱՍԻՎԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ

ԱՐԱՄ ՍԱՖԱՐԱՆ
(Քաղաքական վերլուծաբան, բանասիրական գիտությունների թեկնածու)

2015 թ. Յունուարի 1-ից սկսեց գործել Եւրասիական տնտեսական միությունը: Դա համընկալ համաշխարհային քաղաքականության ու տնտեսության մէջ սկիզբ առած աննպաստ իրողությունների հետ: Ուկրաինական ճգնաժամի պատճառով ծայրաստիճան սրուցեցին Արեւմուտքի եւ Ռուսաստանի փոխյարաբերությունները, գնալով թափ հաւաքեցին փոխադարձ արգելամիջոցները, այդ առճակատումը ստացաւ քաղաքակրթական բախման բնույթ, ինչն այլեւս չեն հերքում ուսումնասիրողները: ԵՄ-ը եւ արեւմտեան քաղաքագետներն ու վերլուծաբանները: ԵՄ-ը անդամ երկրների տարադրամները արժեզրկուցեցին, ինչի պատճառով Յունուար-փետրուար ամիսներին շեշտակիորէն ընկան երկկողմ ապրանքաշրջանառության ծաւալները: Սա նոյնիսկ տնտեսական շրջանակներում անորոշութեան եւ իրարանցման պատճառ դարձաւ, ինչն անմիջապէս օգտագործեցին Եւրասիական ինտեգրման հակառակորդները:

Մարտին իրադրությունը սկսեց փոխուել, գործընթացները կամացկամաց իրենց հունն ընկան, պակասեց անվստահությունը, նուազեցին յաճախ դրսից ուղղորդող մեղադրանքներն ու յոռետեսական եզրակացությունները, իսկ տարուայ առաջին կեսի արդիւնքով Միությունն անդամները տնտեսական աճի եւ անկման տարբեր ցուցանիշներ արձանագրեցին: Ռուսաստանի ՀՆԱ-ն անցած տարուայ նոյն ցուցանիշի հետ համեմատած կրճատուեց 4.6 տոկոսով, Բելառուսինը՝ 3.3 տոկոսով, այնինչ Հայաստանն արձանագրեց 3.5 տոկոս տնտեսական աճ, Ղազախստանը՝ 4.5 տոկոս:

Տարուայ կտրուածքով կանխատեսումները նոյնպէս ուշադրաւ են: Արեւմտեան փորձագիտական կառույցների եզրակացութեամբ Ուկրաինան, Ռուսաստանը եւ Ղազախստանը յայտնուեցին նախադեֆոլտեան իրավիճակում: Հետաքրքրական է, որ նոյն կանխատեսումների համաձայն Ղազախստանի մէկ շնչին ընկնող ՀՆԱ-ն պատմութեան մէջ առաջին անգամ կը գերազանցի Ռուսաստանի նոյն ցուցանիշը: Բելառուսի տնտեսագետները համոզուած են, որ երկիրը տարին կ'ամփոփի 0.2 տոկոս փոքրիկ, բայց աճով: Հայաստանի

տնտեսագետները կարծում են, որ մեր երկրի տնտեսական իրավիճակում կայ անորոշութեան միջակայք, բայց հնարաւոր է նաեւ տնտեսական աճ մինչեւ 1.5-2 տոկոս: Այս թուերի հետեւում տարածաշրջանի երկրների պայքարն է տնտեսական ճգնաժամի աւերիչ հետեւանքների դէմ եւ նոր տնտեսական մոդելների փնտրութեամբ, որոնք գոնէ կը մինիմիզացնէին այդ աւերիչ հետեւանքները: Անվիճելի է, որ ԵՄ-ը տնտեսութիւնների վրայ ազդեցութիւն են գործում նաեւ այն դժուարութիւնները, որոնց դիմակայում են ԲՐԻԿՍ-ի եւ Շանհայի Համագործակցութեան կազմակերպութեան երկրները: Համաշխարհային տնտեսութեան վրայ այս ճգնաժամի բացասական ներգործութիւնը մղում է քաղաքական գործիչներին, քաղաքագետ-վերլուծաբաններին, տնտեսագետներին եւ գործարար աշխարհի մարդկանց մտածելու ազգային տնտեսութիւնների վաղուայ օրուայ մասին: Քաղաքական գլոբալ առճակատումները եւ տնտեսական հակամարտութիւնները ստիպում են վերագնահատել եւ վերահիմնադրել այն գործընթացները, որոնք վերջին կէս տարում համաշխարհային քաղաքականութեան եւ տնտեսութեան այսօրուայ պատկերն են ստեղծել: Կրկին առաջ են մղում ազգային ինքնիշխանութեան, անվտանգութեան եւ կայուն զարգացման, ինչպէս նաեւ ազգային տնտեսութիւնների կազմակերպման ու զարգացման հարցերը:

Ազգային ինքնիշխանութեան հարցը

Հենց որ նորաստեղծ ԵՄ-ը անդամ պետությունները բախուեցին գլոբալ տնտեսական ճգնաժամի առաջացրած դժուարութիւններին, Եւրասիական ինտեգրման ուղեգծի հակառակորդները սկսեցին խաղարկել փոքր երկրների ինքնիշխանութեան կորստի սպառնալիքի թեման: Նրանք պնդում են, որ Ռուսաստանը կայսերական նկրտումներ ունի եւ ցանկանում է կլանել իր բոլոր դաշնակիցներին: Չեղած սեղից ազգային ազատագրական պայքարի բռնկման հող են նախապատրաստում: Եւ սա այն դէպքում, երբ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը բազմիցս ասել է կրկնել է, որ Ռուսաստանը չունի նման ծրագրեր: Սակայն նրա ասածները ուղում են մոռացութեան կամ չիմացութեան տալ, եւ ոչ էլ հիմնուել Ղազախստանի

տանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւի եւ Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի բազմաթիւ ամբիոններից արած յայտարարութիւնների վրայ, որոնց համաձայն դաշնաստանիցիները եւ բելառուսների համար իրենց պետութեան քաղաքական անկախութիւնը անքննարկելի ձեռքբերում է, իսկ Եւրասիական ինտեգրումը՝ ազգային ինքնիշխանութիւնը ամրապնդելու եւ զարգացնելու եւս մէկ միջոց:

Հայաստանում վերջին 25 տարում ձեւաւորուել են նոր ազգային քաղաքական, տնտեսական, գիտամշակութային եւ ինտելեկտուալ վերնախաւեր, որոնց համար Հայաստանի Հանրապետութեան ազգային-պետական ինքնիշխանութիւնը գերագոյն արժէք է եւ մեր հազուագիւտ ձեռքբերումներից մէկը: Այն ամրապնդելու, նրան իրական, շօշափելի բովանդակութիւն հաղորդելու, այդ ձեռքբերումը շարքային մարդկանց հասկանալի, ընդունելի, սիրելի դարձնելու համար չկայ այլ ճանապարհ, քան անդուլ շախտուելը յանուն մեր տնտեսական զարգացման: Սրանք լոկ բարձր խօսքեր կարող էին լինել, եթէ Եւրասիական ինտեգրման հակառակորդներին յաջողուէր գոնէ մէկ ռացիոնալ փաստարկ բերել մեր տնտեսութիւնը դէպի Արեւմուտք շրջելու իրատեսական հնարաւորութեան մասին: Լաւ հասկանալով, որ դրա տակ ոչ մի ռացիոնալ հիմք չկայ՝ Եւրասիական ինտեգրման հակառակորդները խաղարկում են երկու բան: Առաջինը, որ մեր ինքնիշխանութեան կորստի հնարաւորութիւնը մեծանում է եւ փորձում են իշխանութեան դէմ պայքարը լրացնել ազգային-ազատագրական երանգներով: Եւ երկրորդ՝ փորձում են համոզել, որ Հայաստանի սեղը ոչ թէ Եւրասիական պետութիւնների շարքում է, այլեւ եւրոպական ընտանիքի կողքին:

Այս տողերը գրելիս, ես շատ լաւ հասկանում եմ, որ իրական սպառնալիքները եւ արտաքին մարտահրաշխանները հայաստանեան հասարակութիւնը շատ աւելի լուրջ ու զգալուն է ընդունում: Եւ դրա համար քաղաքական կայունութիւնը խարխուլուել, յաճախ արեւմտեան ինչ-ինչ կառույցներից փոխանցուող փորձերը հանդիպում են մեր հասարակութեան անվիճելիորէն առողջ մեծամասնութեան համարժէք դիմադրութեանը: Երբ մենք ասում ենք, որ Հայաստանի անկախութիւնը հայութեան հազարամեայ երազանքի իրականացումն է եւ քննարկման առարկայ չէ, մենք հասկանալի ենք ժամանակակից միջազգային հանրութեան բոլոր

ներկայացուցիչների համար: Բայց մենք չենք վախենում պարզ ու հասկանալի ասել, որ մեր դրօշի եւ զինանշանի փայլը մեծացնելու համար մեզ պէտք է ինտեգրուել կենսունակ տարածաշրջանային տնտեսական կառույցների մէջ: Հայաստանում ապրել որոշաճների կենսամակարդակը աստիճանաբար բարձրացնելու որեւէ այլ՝ թէ՛ տնտեսական, թէ՛ գործնական միջոց չկայ բացի Եւրասիական տնտեսական ինտեգրման պտուղներից իմաստուն կերպով օգտուելը:

Անվտանգութեան եւ կայունութեան հարցը

Պատերազմը մտնեցել է Հայաստանի սահմաններին: Թուրքիայում անհանգիստ է, քրդական աշխարհը մի աննախադէպ աշխուժութեան մէջ է, Սիրիայում չի դադարում աւերիչ պատերազմը, «Իսլամական պետութեան» ահաբեկիչների դէմ միջազգային գործողութիւնները առ այժմ ոչ միայն չեն նուազեցրել նրանցից եկող սպառնալիքը, այլեւ թերեւս մեծացրել են: Ատրպէյճանը չի հրաժարուել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը լուծել ուժային միջոցներով եւ հայերին ահաբեկելու անհեռանկար ու անարդիւնաւէտ ճանապարհով: Չի երեւում, թէ տեսանելի հեռանկարում Ատրպէյճանը կը հրաժարուի այսօրուայ քաղաքականութիւնից:

Ուրախացում է իրանի հանդէպ արգելամիջոցների վերացման հեռանկարը: Սակայն մինչեւ դրա իրականութիւն դառնալը պէտք է ապրել ու զարգանալ: Այն յարաբերական խաղաղութիւնը եւ ներքաղաքական փխրուն կայունութիւնը, որ մենք ունենք, այսօր շատ-շատ օտարների աչքում անգամ նախանձելի է երեւում: Բայց մենք, որ կարողացածի չափով ընդունել ենք մեր սիրիահայ ու իրաքահայ յայրենակիցներին, Ուկրաինայի հակամարտութեան գոտեց անաղմուկ վերադարձողներին, Ռուսաստանի եւ ԱՊՀ միւս երկրներից տնտեսական վատթարացած պատճառների բերումով Հայաստանում մնացած մեր քաղաքացիներին, շատ լաւ հասկանում ենք, որ հերթական ներքաղաքական ցնցումը կամ, ասենք, աշխարհաքաղաքական նախապատուութիւնների հիման վրայ առճակատումը ուկրաինական օրինակով ի չիք է դարձնելու վերջին 25 տարուայ մեր հազուագիւտ յաջողութիւնները: Ինձ թւում է, որ մենք շատ լաւ ենք հասկանում, որ երբ շուրջը պատերազմ է, քառս եւ քաջքայլում, մեզ համար դա ազդան-

Շարք էջ 20

Bedros S. Maronian 818/500-9585

Siamanto B. Maronian 818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048	805 East Broadway Glendale, CA 91205	300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101
---	---	--

- Life Insurance
- Health Insurance
- Group & Individual
- Long Term Care
- Disability
- Estate Planning
- Will & Living Trust
- Full Annual Review
- Mortgage Protection
- College Planning
- Workman's Compensation
- Employee Benefits
- Annuity
- IRA
- 401K & 403B

A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աճիրաճեցնու է

Coverage & Protection should be on the top of your priority list.

ԻՆՉ Է ՄՏԱԾՈՒՄ ՊՈՒՏԻՆԸ

ԷՄՄԱ ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

Միացեալ Նահանգները Ռուսաստանի նկատմամբ նոր պատժամիջոցներ սահմանեց այն բանից յետոյ, երբ ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհրդում մալայզիական «Բոինգի» գործով միջազգային տրիբունալի քուէարկութեանը ՌԴ-ն վետո կիրառեց: Սեկտորալ նոր պատժամիջոցների են ենթարկուում ռուսական նաւթային հակայ Ռոսնեֆտի եւ վնէշէկոնոմբանկի կառուցները, մասնաւորապէս՝ ներդրումների Ռուսական հիմնադրամի կառավարող ընկերութիւնը, Գլոբէկա բանկը, Պրոմինվեստբանկը, ՎէԲ Ասիա լիմիթեդը, ՎէԲ կապիտալը, ՎէԲ ինժինեռինգը, ՎէԲ լիզինգը, Վանկորնետը, Յուզանս-նետեգազը, Ռոսնեֆտ ֆինանսը, Ռոսնեֆտ Թրէյդ Լիմիթեդը, Ռոսնեֆտ Թրէյդինգը: ԱՄՆ պատժամիջոցների ենթակառուցի ցանկում են նաեւ Իժմաշը, ՄԱԿՕ հոլդինգը, SET Petrochemicals-ը, Southeast Trading-ը, Southeast Trading OY-ը, Եւպատորիայի, Թէոդոսիայի, Կերչի, Սեւաստոպոլի, Եւսթրալի նաւահանգիստներն ու Կերչի լաստանաւային ուղեկալը: «Այսօրուայ միջոցառումները վկայում են մեր վճռականութիւնը Ռուսաստանի վրայ ճնշում գործադրելու հարցում՝ միջազգային իրաւունքի նորմերի խախտման եւ Ուկրաինայում իրավիճակը լարելու համար», - յայտարարել է ԱՄՆ ֆինանսի արտասահմանեան ակտիւնների վերահսկողութեան գրասենեակի ղեկավար Ջոն Սմիթը:

Վերաբեռնաւորումը («reset») տարիներ առաջ շրջանառութեան մէջ էր դրել Սպիտակ տունը՝ ռուսամերիկեան յարաբերութիւնները կարգաւորելու համար (է. Գ.) տապալել է ոչ թէ Օպաման, այլ Պուտինը՝ «Ազատութեան» հետ գրոցում նման համոզմունք էր օրերս յայտնել 2012-2015թթ. ՌԴ-ում ԱՄՆ-ի դեսպան Մայքլ Մըք-Ֆոլը: Ըստ նրա՝ այսօր ռուսամերիկեան յարաբերութիւնները վատթարագոյն վիճակում են ԽՍՀՄ-ի փլուզումից ի վեր, եւ լաւատեսութեան համար որեւէ հիմք չկայ. «Երկկողմ յարաբերութիւնները շտկելու համար Ռուսաստանը պէտք է դադարեցնի աշակցութիւնը Ուկրաինայի անջատողականներին եւ դուրս գալ Զրիմից»:

Ինչո՞վ է պատասխանում Մոսկուան Արեւմուտքի քայլերին, որոնք ակնյայտօրէն Ռուսաստանին օր օրի աւելի են մղում դէպի անդունդ: Տպաւորութիւն է ստեղծուում, որ այսօր ՌԴ-ն ղեկավարում են իրականութեան հետ կապը կորցրած անհատներ: Ռուսաստանը նոր դիմում է ներկայացրել ՄԱԿ-ին, որով պահանջում է Արկտիկայից 1,2 մլն ք/կմ տարածք ռուսաստանեան ճանաչել: Ռուսաստանի գիտնականները բազմաթիւ գիտական տուեալներ են ներկայացրել, որոնք ամրապնդում են Մոսկուայի պահանջներն առ այն, որ «պահանջուող տարածքները Ռուսաստանի մայրցամաքային ծանծաղուտն է»:

Ռուսաստանում ուշագրաւ գործընթաց են ծաւալուում վերջին օրերին: Օրինակ՝ ոչնչացում է ԵՄ-ից ներկրուած պատժամիջոցային ցուցակի անդի առաջին խմբաքանակը: ԵՄ երկրներից ներկրուած արգելուած մթերքները ոչնչացնելու մասին հրամանը ստորագրել էր ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը: Սամարայի շրջա-

նում արդէն իսկ այրել են խոզի մսի խմբաքանակը, որը, ըստ «Ռոսսեկրոնի» ներկրուել էր կեղծ փաստաթղթերով: Պատժամիջոցային ցուցակում յայտնուած մթերքների ոչնչացման մասին որոշումն արդէն յանգեցրել է նրան, որ ԵՄ-ից շրջանցիկ ճանապարհով սննդամթերքի ներկրման ծաւալները կտրուկ նուազել են: Հարցին, թէ կարո՞ղ է արդեօք այդ որոշումը փոխուել հասարակութեան պահանջի հիման վրա, ՌԴ նախագահի մամուլի խօսնակ Դմիտրի Պեսկովը պատասխանել է. «Ես չեմ կարող պատասխանել այդ հարցին: Նախագահի հրամանը ուժի մէջ է մտնում եւ ենթակայ է պարտադիր կատարման»: Մինչդեռ Ռուսաստանում հասարակական բուռն արձագանք է առաջացրել նշեալ որոշումը: Մթերքների ոչնչացման դէմ խնդրագիրը համացանցում հաւաքել է աւելի քան 100 հազար ստորագրութիւն: Աւելի քան 100 հազար մարդ խնդրում է չեղարկել ՌԴ ներկրման արգելք ունեցող մթերքների ոչնչացման մասին հրամանագիրը եւ օրէնք ընդունել այդ մթերքները կարիքաւոր ռուսներին, մասնաւորապէս՝ վետերաններին, թոշակառուներին, հաշմանդամներին, բազմազաւակներին, բնական աղէտներից տուժածներին փոխանցելու մասին:

Մէկ այլ ցնցող պատասխան Ռուսաստանից՝ Արեւմուտքին: ՌԴ արդիւնաբերութեան եւ առեւտրի նախարարութիւնը մշակել է կառավարութեան կանոնակարգի նախագիծ, որը սահմանափակում է բժշկական արտադրանքների պետական գնումները: Դրանց թւում

Սփիւռքի կոմիտէն եւս ունէր նման շքանշաններ, բայց խիստ արժանաւորների, իրական վաստակ ունեցողների համար միջնորդում էր նաեւ տարբեր գերատեսչութիւնների, ստեղծագործական-հասարակական կազմակերպութիւնների մօտ՝ համապետական նշանակութեան մրցանակների համար, եւ կամ կազմակերպում էր հանդիպումներ տուեալ անձի հետ, համերգներ էր կազմակերպում եւ կամ հրատարակում նրանց գրքերը: Իսկ ոչ ունեւոր իր հիւրերի՝ մտաւորականների, ուսուցիչների կամ երեխաների կեցութիւնը, նոյնիսկ երթեւեկի ծախսերը ինքն էր հոգում: Դա մեծագոյն գնահատականն էր:

- Ախր, շքանշանների առատութիւնը նուազեցնում է այդ պարգևների մշակակութիւնը, հասարակացումում դրանք: Մարդիկ են եղել, ովքեր զարմացել են մտնում պատուի արժանացալու համար: Օրինակ, մի քանի ամիս առաջ, Մոնրեալ (Քանատա) այցելելիս, Սփիւռքի նախարարը, բնակամարտը, եղել է նաեւ ՀԲԸՄիութեան Ալեք Մանուկեան փառաւոր վարժարանում, որը նոր՝ երիտասարդներից բաղկացած հոգաբարձական կազմ ունի: Շքանշաններով պարգևատրուել են նրանցից ոմանք, այնինչ այդ դպրոցի բուն հիմնադիրը եւ հոգաբարձութեան 40 տարուայ նախագահն անտեսուել է...

- Այո, Սփիւռքի կոմիտէն շատ լաւ գիտէր իւրաքանչիւրի արած գործը եւ վաստակը:

- Սակայն այդ ժամանակ էլ

սփիւռքի կոմունիստներն էին՝ հայ համայնավարները, որ իրենց կամքն էին պարտադրում:

- Դա միայն առաջին շրջանում: Այնուհետեւ հայ կոմունիստներն էլ զգացին, որ Վարդգէս Համազասպեանը եւ յետագայում կարէն Դալլաքեանը անտեղիտալի են սկզբունքային հարցերում, ազգային-պետական նշանակութեան խնդիրներում: Այսուամենայնիւ, պահը չկորցնելով ասեմ, որ Սփիւռքի գծով ներկայիս նախարարը գրագէտ է խօսում, ի տարբերութիւն շատ-շատերի՝ ժպտերես է, արտացաւ իր գործի հանդէպ...

- Նաեւ խիստ եռանդուն եւ արտակարգ ոգեւորութեան տէր...

- Մեր այս գրոցի թեման, այս բնագաւառն աւելի մեծ ու ընդգրկուն են, քան որեւէ անհատի լաւ կամ վատ լինելը:

Ժողովուրդն ասում է. «Ամէն ճաշ ունի իր եփելու ձեւը»: Որ տիկին Յակոբեանը հօր մէկն է, ես դա, աւելի քան շատերը, տեսել ու համոզուել եմ, երբ իր պատգամաւոր ընտրուելու ժամանակ եղել եմ նրա տարածաշրջանում: Հպարտութեան եւ ուրախութեան պահեր եմ ապրել, երբ տեսել եմ, թէ նա ինչպէս գիտէ ամէն ընտանիքի լաւ ու վատը. ո՞ր երեխան բուժման կարիք ունի, ո՞ր տնտեսութիւնն ինչի պէտք ունի, ո՞ր ճանապարհով կաթը տեղափոխեն, որ կարագ չդառնայ, տուեալ տարում որքա՞ն է կարտօֆիլի գինը, եւ միայն պատիւ բերող իմացութիւն, նուիրում, անմնացորդ նուիրում, արդիւնքում՝ գնահատանք, նոյնիսկ սէր:

Արդ, իր տարածաշրջանից տիկին նախարարին բերեք իր աթոռին, որի տեղակալը տարբեր հեռուտառաքիքներով պատմում էր, թէ ինչպէս հայ (ասենք) վարդիշաղը թուրքիայից (ուր հաւանաբար Ջեյնաբ էր կոչուում), մահմեդական ամուսին ունենալով հանդերձ, եկել է Հայաստան եւ Ս. Էջմիածնում նորից հայ քրիստոնէայ դարձել: Իսկ Սփիւռքի նախարարութեան մէկ տարուայ աշխատանքի ամփոփման ժամանակ նախարարից լսում ենք, թէ ինչպիսի ծաւալ են ստացել իսլամացած հայերին դարձի բերելու ուղղութեամբ տարուող աշխատանքները: Մենք մեր ողջ պատմութեան ընթացքում քրիստոնէայ-իսլամ խնդիրներ չենք ունեցել, մեր խնդիրը հայ-թուրք շարաբերութիւններն են: Իրանում, Միւրիայում, Եգիպտոսում, իրաքում, էլ ո՞ւր մնաց Լիբանանում, մէկ հայ եկեղեցի չի քանդուել: Այլ ընդհանրապէս: Ինչ վերաբերում է Տէր Ջօրի եկեղեցուն եւ յուշարձանին, ապա յիշենք, թէ այն երբ պայթեցուցեց, այն օրն ի՞սկ, երբ Երեւանից ձայն լսուեց, մատնակուցեց, լավ է՝ թափ չտրուեց...

- Ո՞վ պէտք է ուղղութիւն ցոյց տայ նախարարին: Արտգործնախարարը սա տեսնում է, նախագահը տեսնում է, եթէ այո, ինչո՞ւ կտրուկ չի ակալ: Ինչո՞ւ չի ասում, որ վառողի հետ գործ ունեցող չի ծխում...

- Ի դէպ, իսլամութիւնից խորշելու, հայ-թուրք շարաբերութիւնները հայ-իսլամ շարաբերութիւնների հետ չփոխելու միտումը եւ սխալը շարունակ երեւում են նաեւ մեր որոշ լրատուամիջոցներում, նոյնիսկ քաղաքական տեսաբանների մօտ: Եւ այդ վտանգաւոր, պատմականորէն անճիշտ երեւոյթիւն անհրաժեշտ ուշագրութիւն չեն դարձնում համապատասխան կառուցները, նաեւ Սփիւռքի նա-

խարարութիւնը: Օրինակ՝ մեր լրատուամիջոցները շատ քիչ ուշագրութիւն են դարձնում այնպիսի փաստի վրայ, որ մեր հարեւան իրանի իսլամական Հանրապետութիւնում ինչպիսի հոգատար վերաբերմունք կայ հայկական եկեղեցիների ու վանքերի նկատմամբ: Եւ կամ՝ ի՞նչ ասես չարժի այն փաստը, որ մեր Հաղարծինը վերանորոգուեց Շարժայի շէյխի նուիրած պատկառելի գումարներով:

- Վերադառնալով Ձեյնաբի պատմութեանը...

- Ասելիքս այն էր, որ նախարարութիւնը լաւ է անում իսլամացած կամ իսլամացուած հայերով զբաղուելով: Բայց, ի սէր Աստուծո, բնաւ կարիք չկայ դա շեշտելու: Ինչպէս որ կարիք չկայ որոշ աշխատանքներ ի ցոյց ամէնքի անելու, ինչպէս, օրինակ, հայ լուբ-բիստների համաժողովը, որը կապցաւ բաց դռները «հետեւում»:

- Ի՞նչ էք կարծում, դա աւելորդ ոգեւորութեան արդի՞ւնք է:

- Ոչ միայն: Հանդիսանալիս այդ մօտեցումը դրսեւորում է նաեւ այլ պարագաներում: Իսկ երբեմն էլ՝ այլ գերատեսչութիւնների ոլորտներում: Սփիւռքահայի համար միեւնոյն է, թէ նա որ նախարարի քովը կը նստի, որ փոխնախարարի հետ կը նկարուի, եթէ հիւր գալ որեւէ նախարարութեան հրաւերով, նորից պետութեան «հիւրը կ'ըլլայ»: Գործը կը հեշտանայ, նախարարութեան վրայ ծախսուող գումարը, եթէ ասէք որքան է (եւ չգիտեմ), կը խնայուի եւ, եթէ կառուցուելիք երկու եկեղեցու (իշխանութեան խորհրդով) դրամն էլ խնայուի ու միանայ նրան, Գիւմրիի չորս հազար անտուն ընտանիքների թիւը կ'իջնի՞ր...

Շարունակենք: Հայաստանի բուհերի սփիւռքահայ շրջանաւարտների 50 տարին ինչո՞ւ չկազմակերպեց կրթութեան նախարարութիւնը (այն, գոնէ, ժամանողների թիւը ճիշտ կը գրէր, չէր տասնապատկի), լեզուի հարցերի քննարկումը ինչո՞ւ չի նախաձեռնում Ակադեմիան (գուցէ, նրանց գործը շատ է), հայ իրաւաբանների հաւաքն ինչո՞ւ չկազմակերպեց Արդարադատութեան նախարարութիւնը: Կարելի է դեռ թուարկել, բայց որքան էլ թուարկես, պատասխան չկայ: Ինչո՞ւ հարցին պատասխանեց միայն Կիւլպիկեան հիմնարկը, որն արեւմտահայերի պահանջները նուիրուած իր հաւաքներն ու քննարկումներն արեց «թումօ» կենտրոնում՝ մասնագէտ անհատներ ընդգրկելով: Մեկնաբանութիւնը եղաւ՝ քննարկուող հարցը գիտական է: (Հասկացողին շատ բարեւ):

- Եթէ յիշում էք, Սփիւռքի նախարարութեան կազմութեան օրերին հարց էր տրուում, թէ նոր նախարարութիւնը իսլամներունցի չի անի արդեօք արտգործնախարարութեան հետ: Նման մտավախութիւնները արդարացի՞ էին:

- Որոշապէս՝ այո: Երբ տարբեր երկրներում գործող մեր դեսպանատներին գուգահեռ նշանակուում են Սփիւռքի նախարարութեան ներկայացուցիչներ, իմաստը ո՞րն է: Միւս կողմից, հենց Հայաստանում բազմաթիւ են դէպքերը, երբ Սփիւռքի նախարարութիւնը կամ մրցակցութեան մէջ է մտնում Մշակոյթի նախարարութեան հետ, կամ ուղղակի իր վրայ վերցնում տարբեր հիմնարկների, ասենք՝ Գի-

ՍՈՒՓՈՐՍԱՐՔԷԹԻ ԿԱՍ WALL STREET-Ի ՅՈՒՏՈՒՄԻՆ

ԴՈՎՏ. ՄԻՆԱՍ ԳՈՃԱՅԵԱՆ

Տարիներ առաջ մեր երախտաշատ եւ վաստակաշատ ուսուցչուհիներէն ապա տնօրէնուհիներէն Տիկ. Սօսի Պետրիկեան, ուսուցիչներու կողմէ իր ուշադրութեան յանձնուած արդար դժգոհութիւն մը ունկնդրելէ ետք (բարոյական եւ նիւթական գնահատանքի խնդրանքի մը առթիւ), պահ մը լուռ մնալէ ետք, սապէս պատասխանեց քիչ մը ընկճուած ձայնով.

- Դուք (ուսուցիչներդ) ընտրած էք աշխարհի ամենէն ապերախտ ասպարէզը. ուրիշ բան չեմ կրնար ըսել...

Մեյրոնեան կրթական Հաստատութիւնը ըրուած շուկայական հոգեբանութեան վերջին գոհերէն մէկը:

Տիկ. Ս. Պետրիկեան ճանչցուած էր որպէս խիստ եւ «չոր» կրթական մշակ, բայց գինքը լաւ ճանչցողները եւ իր ներսիդին լաւ գիտցողները այդպէս չէին մտածեր իր մասին:

Երբեք պիտի չմոռնամ այդ պատասխանը: Այնուհետեւ ե՛ւ ինք ե՛ւ իր գործակիցներէն շատեր (ներառեալ տողերու հեղինակը) գիտնալով հանդերձ մերկ իրականութիւնը, մեր աչքի լոյսը տուինք, մեր երիտասարդութիւնն ու ամբողջ եռանդը դրինք մեր ասպարէզին մէջ եւ ծնողքի մը պէս ուրախացանք, հրճուեցանք ու հպարտացանք մեր աշակերտներուն յաջողութիւնները տեսնելով:

Յարգելով բացառութիւնները, առանց քաշուելու եւ բառերը ծամծմելու, խոհերու կը յանձնեմ տգեղ, շուկայական ու առարկայապաշտական մօտեցումներու մասին, գոր կը նոյնացնեմ «բաժնեթղթային» հոգեբանութեան հետ:

Զարգացած, կիրթ ու քաղաքակիրթութեան մէջ երկար ճամբայ կտրած երկիրներու մէջ բոլոր դասաւանդող ուսուցիչները կը գնահատուին նոյն չափանիշով: Այսինքն, ուսողութիւն, գիտական առարկաներ, համակարգչային գիտութիւն դասաւանդողները եւ լեզուներ, ընկերային առարկաներ, պատմութիւն, երաժշտութիւն եւ այլ նիւթեր դասաւանդողները կը գնահատուին ըստ իրենց վկայականներուն եւ տարիներու վաստակին: Կոպիտ արտայայտութեամբ՝ «կրթական շուկային» մէջ անոնց արժեթղթերը նոյն գինը ունին: Կրնա՞նք նոյնը ըսել հայկական դպրոցներու պարզային: Այսինքն, որպէս կանոն եւ օրէնք անցեալին եւ հիմա, հայերէն, հայոց պատմութիւն, կրօնք եւ յարակից առարկաներ դասաւանդող հայ ուսուցիչները վարձատրուած են եւ կամ կը վարձատրուի՞ն արդեօք նոյն չափանիշերով, կը կասկածիմ:

Ինչո՞ւ համար եւ բարոյական ի՞նչ սկզբունքներու հիման վրայ հիմնուած է այս վիրաւորական վերաբերմունքը, դեռ աւելին՝ հայցի կրթութիւն ու հայկական առարկաներ դասաւանդող ուսուցիչէն կը պահանջեն «գերագոյն» գոհողութիւններ, բայց նուազագոյն նիւթական վճարումով: Զկայ աւելի վիրաւորական ու լլկող արտայայտութիւն կամ արձագանգ, երբ խնդրառկու ուսուցիչին «Մեր պիւտոնքն էն ապրանքն է...»: Այսինքն՝ կ'ուզես աշխատիր, չես ուզեր՝ ազատ ես...: Այլ խօսքով՝ շուկայական հոգեբանութեամբ ու մօտեցմամբ՝ չես

ուզեր մի՛ գներ: Զոհողութեան դէմ չեմ: Հայերէնի ուսուցիչներս, լաւ գիտակցելով մեր սրբազան պարտականութեան ազգակերտիչ անհրաժեշտութիւնը, յանուն հայցի դաստիարակութեան ու կրթութեան եւ յօգուտ հայապահպանութեան, ստիպուած ենք համակերպիլ մեզմէ ակնկալուած գոհողութեան գաղափարին, պայմանով որ յարգուին նաեւ մեր ակնկալութիւնները, որովհետեւ մենք ալ մեր «առօրեայ ծախսերը ունինք», մենք ալ վճարումներ ունինք եւ նիւթական յանձնառութիւններու տակ ենք, երբեմն ալ՝ ծանր:

Դրուագով մը «գուարճացնեմ» ընթերցողը:

Տասնհինգ տարի առաջ ինձմէ խնդրուեցաւ հայերէնի «լաւ» ուսուցիչ մը գտնել իմ պաշտօնավարած դպրոցիս միջնակարգ եւ երկրորդական բաժնին համար: Դժուար չեղաւ գտնելը: Երիտասարդ ուսուցիչը ներկայացաւ, հանդիպում ունեցաւ տնօրէնութեան հետ, կրթական մարմնի անդամները հարցազրոյց ունեցան հետը առանց գիտնալով (թէ ես էի հայկական բաժանմունքի վարիչը...) եւ անմիջապէս ընդունեցին աշխատանքի: Ուրախ էի եւ հպարտ, որ իմ յանձնարարած անձնաւորութիւնը «հաւնուեր էր»: Երիտասարդը գոհ էր եւ երախտագէտ իմ հանդէպ, մանաւանդ որ ի դերեւ չէին ելած իր յոյսերը կապուած աշխատավարձի հետ:

Քանի մը ամիս ետք պարզուեցաւ, որ մեր նոր ուսուցիչը զգալիօրէն աւելի բարձր աշխատավարձ կը ստանար քան միւսներն ու նոյն վկայականները ունեցող եւ աւելի շատ տարիներու փորձառութիւն ունեցող ուրիշ ուսուցիչէ մը: Երբ առիթով մը թեթեւակի կերպով այս մասին մեր զարմանքը յայտնեցինք «վերիններուն», մեզի տրուեցաւ աշխարհի ամենէն յիմար, անըմբռնելի ու արեւմտեան չափանիշերու խոտոր պատասխան մը, թէ՛ իրենք (դպրոցին «տէրերը», իմա՝ կրթական կամ հոգաբարձական մարմինը՝ Մ.Գ.) խիստ պէտքով ինքն ինքն կը գործ առաջարկած են երիտասարդին, որ այս մարդ մըն էր ի վերջոյ, ընտանիքին հետեւ էր... եւ այլն: Երիտասարդը ինքն ալ զարմացած էր իմանալով վարձատրութեան զգալի տարբերութեան մասին:

Շուկայական տնտեսութեան յատուկ պահանջարկի եւ հայթայթումի (supply and demand) մօտեցում չէ, հապա ի՞նչ է եղածը: Ի միջի այլոց «վերին մարմնի» ապերախտ անդամը ճիշդ այսպէս ալ բանաձեւեց իր բացատրութիւնը:

Wall Street-եան հոգեբանութիւն չէ, հապա ի՞նչ է, երբ յաճախ կը յայտնուին մեր դպրոցական «վերին մարմիններուն մէջ» անձեր, որոնք հայերէն չեն գիտեր, իրենց գիտցած անգլերէնը կա՛մ շատ նեղ մասնագիտական է եւ կա՛մ պարզապէս աղքատիկ, հայոց լեզուի, գրականութեան ու պատմութեան մասին չունին տարրական գիտելիքներ (երբեմն իրենք կը խոստովանին) «հանգամանքներու» բերումով, յարգանքի պակաս ունին հայ դարաւոր եկեղեցուց աւանդութիւններու եւ վարդապետութեան:

Շարք էջ 19

ԵՐՈՒԱՆԴ ՊԱՊԱՅԵԱՆ (1913-2014) ՄԵՉԻ ՅԵՏ Է ԱՆ

Տարի մը առաջ էր, երբ դէպի յաւերժութիւն մեկնեցաւ ուսուցչապետը, տնօրէնը, հրապարակագիրը, հրապարակախօսը, թէքէեանականը, ռամկավարը, հայրն ու մեծհայրը՝ ԵՐՈՒԱՆԴ ՊԱՊԱՅԵԱՆ:

Անխուսափելի է մարդ արարածի կեանքի շրջանի աւարտը այս երկրի վրայ, բայց միշտ չէ որ այդ աւարտը վերջն է կեանքին, այլ սկիզբն է նորին, մանաւանդ երբ այդ կեանքը ապրած մարդ արարածը իր օրերը լեցուցած է կրթա-դաստիարակչական ու մշակութային բազմերանգ գործունէութիւններով, որոնք «արժանի են գրոց լիշատակի»:

Տարի մը առաջ էր, երբ մենք հրաժեշտ տուինք իրեն, բայց աղի-ողորմ չողբացինք իր մահը, այլ ափսոսացինք այն պահերուն համար, որ ան պիտի պարգեւէր տակաւին մեզի: Հայկական Այնթապէն Հայէպ, Պէյրութ, հայագաղութներ, մինչեւ Աւստրալիա եւ հուսկ ապա Լոս Անճելըս ան ապրեցաւ տիպար հայ մտաւորականի ու գործօն հայրենասէրի կեանքով:

Օգոստոս 2-ին Քալիֆորնիայի Սուրբ Պետրոս եկեղեցուց մէջ տեղի ունեցաւ Երուանդ Պապայեանի տարելիցը՝ ի ներկայութեան կողակցին՝ Տիկ. Ռոզինին, հարազատներուն, ազգականներուն, բարեկամներուն, Այնթապի հայրենակիցներուն եւ հոծ թուով նախկին աշակերտներու եւ կուսակցական ու միութենական հաւատաւորներու: Յետ հոգեհանգստեան արարողութեան տրուեցաւ նաեւ հոգեհոսք, որ առիթ մը հանդիսացաւ կրկին վերապրելու իր լուսէ ներկայութիւնը:

Օրուան հանդիսապետ Պրն. Լեւոն Քէշիշեան, որ եղած էր Ե. Պապայեանի աշակերտը, երախտագիտութեամբ լիշեց այն դրոշմը, որ «Պրն. Տնօրէնը» դրած է իւրաքանչիւր Թէքէեանցի աշակերտի մէջ: Ապա ան հրաւիրեց Տիար Բարսեղ Գարթալեանը, որ սրտի խօսք ըսէ տարելիցին առթիւ: Ան, որպէս ՀԲԸՄիութեան երկարամեայ աշխատակից, շեշտը դրաւ Ե. Պապայեանի կրթա-դաստիարակչական բեղուն գործունէութեան վրայ, որուն շնորհիւ ան արժանացած է ՀԲԸՄիութեան եւ Թէքէեան Մշակութային Միութեան բարձրագոյն գնահատանքներուն: Պրն. Ե. Պապայեան Ալեք Մանուկեանի վստահելին եղած է. անոնց սերտ բարեկամութեան շնորհիւ ծաղկունք ապրած է հայ դպրոցը: Ուշագրաւ է Աւստրալիոյ Սիտնի քաղաքի ՀԲԸՄ «Ալեքսանտր» դպրոցը, որուն հիմնարկէքը կատարուած էր 1986-

ին Ալեք Մանուկեանի ներկայացուցիչ Երուանդ Պապայեանի ներկայութեամբ, այնուհետեւ ան, հակառակ իր յառաջացող տարիքին, երկու անգամ եւս ճամբորդած Աւստրալիա՝ հետեւելու համար նորահաստատ վարժարանի աճուսիս:

Յիշուեցաւ նաեւ թէ Պրն. Ե. Պապայեան 1974-ին ՀԲԸՄիութեան եւ ԹՄՄ-ի որպէս ներկայացուցիչ բացումը կատարած է Պոլսէն Ս. Արքայի ՀԲԸՄ-ի Մարի Մանուկեան վարժարանի եւ Մոնթեվիտոյի ՀԲԸՄ Նուպարեան վարժարանի, ինչպէս նաեւ «Արշակ Զոպանեան» Մշակութային կեդրոնի:

ԹՄՄ-ի Լոս Անճելըսի Ատենապետ Պրն. Վաչէ Սեմերճեան արտայայտուեցաւ ընտանիքի բարեկամի, հաճելի եւ հիւրասէր գրուցակիցին մասին, որուն հետ գրուցելը գերագոյն հաճոյք մըն էր: Իր կողիկութիւնը հիւր ընդունելու, որքան ալ մտերիմ ըլլար անձը, եւ Տիկ. Ռոզինի քաղցրահամ ուտելիքներու հիւրասիրութիւնը Պապայեաններու տուները կը վերածէր ընտանեկան տաքուկ բոցին մը:

Այնթապիցիներու Հայրենակցական Միութեան կողմէ սրտի խօսքով հանդէս եկաւ Հայ Այնթապցիներու Մշակութային Միութեան երկարամեայ Ատենապետ Պրն. Հարոյտ Տեմիրճեան: Ան դրուատեց Ե. Պապայեանի վրիթխարի աշխատանքը Այնթապցիներու Հայրենակցական Միութեան ներս, որպէս Այնթապի պատմութեան գրքի (Գ. Հատոր) հեղինակ, «Նոր Այնթապ» ամսագրի խմբագիր եւ Միութեան՝ Հայաստանի մէջ (Նոր Այնթապ) ձեռնարկած գործունէութիւններու նախաձեռնող ու մղիչ ուժ:

Տարելիցի հիւրասիրութեան արարողութեան աւարտին ընտանիքին անդամներուն անունէն խօսք առաւ Փրոֆ. Սիլվա Գարայեան, որ անգամ մը եւս ընդգծեց մանկավարժ հօր դրական մեծ դերը իր զաւակներուն կեանքին մէջ՝ շեշտելով որ Հայր Պապայեան միշտ քաջալերած է իր զաւակներն ու թողնելը ձգտելու աւելի բարձրին: Փրոֆ. Ս. Գարայեան իր շնորհակալական խօսքին մէջ յատկապէս լիշեց Թեմիս Բարեխնամ Առաջնորդ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանը, որ եղած էր իր հօր աշակերտներէն մին, եւ որուն նախաձեռնութեամբ ու բարեխնամ կարգադրութեամբ Լա Քրեսսենթա Հոգիտի Հայաստանեայց Եկեղեցուց շաբաթօրեայ վարժարանը անուանակոչուեցաւ Երուանդ Պապայեանի անունով:

ԲԱՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Շարունակուած էջ 8-էն ցած Լոս Անճելըսի մերձակայ լեռները արշաւելու ժամանակս: Արարատը թէեւ վարչակաւոր էր Թուրքիոյ մէջ է, բայց ան մերն է եւ պիտի մնայ մերը մեր երգերուն, նկարներուն եւ բանաստեղծութիւններուն մէջ...: Ապա Արթուր Բարսեղեանի ձեռքով Արարատ լեռ բարձրացող արունակներէ բոլոր անդամներուն բաժնուեցան մէկական պաշտօնական վկայագիրներ, որոնց մէջ կը հաստատուէր անոնց Մասիս սարի

զագաթը նուաճած ըլլալու փաստը: Այս տարուան լեռնագնացներէն էին Ռուբէն եւ Անահիտ Հարմանտայեան, Գրիգոր Արզումանեան, Հանս Քէյքէր (կէս հայ կէս գերմանացի), Արշակ Հայրիկեան, Մկրտիչ Մանուկեան, Արթուր Բարսեղեան եւ Նիւ Երրեքն Ռոպին Պարոն (կէս հայ կէս իտալացի): Ուրախ միջոցառման ներքեւ շարունակուեցաւ ընթերիքն ու պարը: Օրուան կարգախօսն էր շարունակել քայլարշաւը Մասիս սարն ի վեր, մինչեւ... ազատագրում: Գ.Մ.

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՀԱՃՆՈՅ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՍԱԿԱԿՈՐ ԳՈՐԾԻՉ, ՆԱԽԿԻՆ ԱՏԵՆԱՊԵՏ՝ ԵՓՐԵՍ ՊԱՂՊՈՒՏԱՐԵԱՆԻ ՀԵՏ

Հարցազրույցը վարեց՝
ՍԱՐԳԻՍ ՄԱՃԱՌԵԱՆ

Պրն. Եփրեմ Պաղպուտարեանի երկար տարիներու անսակարկ ու նուիրեալ ծառայութիւնը թէ՛ որպէս անդամ Հաճնոյ Հայրենակցական Միութեան Կեդրոնական Վարչութեան եւ թէ՛ Լոս Անճելըսի Հաճնոյ Հայրենակցական Միութեան Վարչութեան ատենապետ, ծանօթ է մեր համայնքին: Ծանօթ ենք նաեւ իր կատարած այցելութիւններուն Հայաստան, Լիբանան, Ֆրանսա, Արժանթին հայրենակցական աշխատանքներու բերումով: Անձնական եւ թէ՛ միութենական գործերու գծով իր յաճախակի այցելութիւնները կը զուգարկապէս նաեւ վերոյիշեալ հայաստրոփ քաղաքներու ծոցին մէջ տեղի ունեցած աշխարհիկ թէ՛ հոգեւորական պատկառելի հանդիսութիւններուն, որոնց անպայման ներկայ կը գտնուի Պր. Պաղպուտարեան: Այսպէս, անցեալ Յունիս եւ Յուլիս ամիսներուն, իր Լիբանան այցելութեան ընթացքին ան ներկայ գտնուած է Լիբանանի Վարիչ մարմնի կողմէ կազմակերպուած Հնչակեան 20 Կախաղաններու յուշահանդէսին եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի նախագահութեամբ տեղի ունեցած Սրբալոյս Միւռոնի օրհնութեան արարողութեան Պիքֆայայի վանքին մէջ: Բաց աստի, ընդառաջելով Հայաստանի Նոր Հաճնի քաղաքի քաղաքապետ Պր. Գագիկ Մաթէոսեանին հեռաձայնային անակնկալ հրահրին, մեկնած է Երեւան, ներկայ ըլլալու համար Նոր Հաճնի քաղաքի նորակառուց Ս. Ամենափրկիչ եկեղեցւոյ օծման արարողութեան եւ անոր յաջորդող մեծ ընդունելութեան: Արդ, ուզեցինք Պր. Պաղպուտարեանին հետ հարցազրույց մը ունենալ՝ վերոյիշեալ ձեռնարկներէն ստացած իր տպաւորութիւններն ու ապրումները կիսելու համար մեր ընթերցողներուն հետ: Ստորեւ մեր հարցազրույցը:



Նաեւ գեղարուեստական յատուկ յայտագիր մը, որու ընթացքին անուանի ասմունքող Անի Եփրեմեան հոյակապ կերպով ասմունքեց՝ Քսաններու նահատակութեան նուիրուած «Պայագիր»ը: Իսկապէս որ շատ տպաւորիչ, անմոռանալի, ամէն տեսակէտով շատ յաջող ձեռնարկ մըն էր, շուրջ 3 ժամ տեւողութեամբ:

Հ. Անդրեան, փոխանցեցեք Ձեր տպաւորութիւնները մաւր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Պիքֆայայի վանքի միւռոնօրհնութեան արարողութեան եւ անոր յաջորդող մեծ ընդունելութեան մասին: Արդ, ուզեցինք Պր. Պաղպուտարեանին հետ հարցազրույց մը ունենալ՝ վերոյիշեալ ձեռնարկներէն ստացած իր տպաւորութիւններն ու ապրումները կիսելու համար մեր ընթերցողներուն հետ: Ստորեւ մեր հարցազրույցը:

ՅԱՐՑՈՒՄ. Պր. Պաղպուտարեան, ինչպէս ըստե՞ք, թէ ի՞նչ են վերոյիշեալ մէկը միւսէն տարբեր, մէկը միւսէն նշանակալի ձեռնարկներն Ձեր ստացած տպաւորութիւններն ու ապրումները:

ՊԱՏԱՍԽԱՆ. Սկսիմ առաջինէն՝ Քսաններու նուիրուած հանդիսութեան, որ տեղի ունեցաւ Լիբանանի Վարիչ Մարմնի կազմակերպութեամբ, Forum de Beyrouth շքեղ ու ընդարձակ սրահին մէջ, աւելի քան 1500 հանդիսականներու, պետական պաշտօնական անձնաւորութիւններու, հայկական քաղաքական, երիտասարդական, կրօնական, բարեսիրական կազմակերպութիւններու եւ հաստատութիւններու ներկայացուցիչներու ներկայութեան: Իսկապէս, հոյակապ տեսարան մըն էր: Բոլոր հայութիւնը, մէկ սիրտ, մէկ հոգի դարձած, միասնական ոգիով յարգեց Քսաններու յիշատակը: Օրուան բանախօսները անգամ մը եւս պանծացուցին թուրք դահիճներուն դէմ ուղղուած Տօթթ. Պէնէի մարզարձակայն այն խօսքերը, թէ «քսան հազարներ պիտի գան մեր վրէժը լուծելու»: Գործադրուեցաւ

Պ. Անմոռանալի տպաւորութիւններ ունիմ նաեւ Պիքֆայայի վանքին մէջ տեղի ունեցած սրբալոյս միւռոնի օրհնութեան արարողութեան: Արամ Վեհափառի նախագահութեան ներքեւ տեղի ունեցած Ս. Միւռոնի արարողութիւնը, ապա վանքի բակին մէջ տեղի ունեցած բացօթեայ հանդիսութիւնը պարզապէս պատմական էին իրենց կազմակերպութեամբ, տարողութեամբ, ներկայ կրօնական ու աշխարհիկ բարձրաստիճան հիւրերու ներկայութեան, մասնաւոր՝ 15,000 հաւատացեալ ժողովուրդի մասնակցութեամբ: Լիբանանեան բանակը, ապահովութեան ուժերը, երթեւեկի ոստիկանութիւնը ոգի ի բռին աշխատեցան որպէսզի երթեւեկութիւնը ընթանալու սահուն ու ապահով, առանց որեւէ խանգարումի: Պէյրութէն, Պուրճ Համուտէն, Տօրայէն, Զալայէն, Անթիլիասէն ժողովուրդը շարանշարան դիմեց դէպի Պիքֆայայի վանքը որուն հսկայ բակին մէջ արդէն տեղաւորուած էին անթիւանահամար աթոռներ, մինչեւ Եղեռնի յուշարձանին տակը: Առաջին շարքերու վրայ տեղ գրաւած էին եպիսկոպոսոս դասը: Այնտեղ էին Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան ներկայացուցիչը, Վրաստանի հայոց առաջնորդը, Կ. Պոլսոյ Պատրիարքութեան ներկայացուցիչը, Ղպտի, Հայպէշ, Հնդկ, Ասորի, Մարտի, Յոյն Օրթոտոքս, Ռուս Օրթոտոքս, Կաթողիկէ, Քաղդէացի, Հայ Աւետարանական համայնքներու պետեր, Լիբանանի Պապական Նուիրակը եւ Վատիկանէն Փրակիսկոս Պապին անձնական ներկայացուցիչ կարդինալը: Ներկայ էին նաեւ պետական բարձրաստիճան

անձնաւորութիւններ, դեսպաններ՝ գանազան երկիրներէն եւ Հայաստանէն: Ես բախտը ունեցայ երրորդ շարքի վրայ տեղ գրաւելու եւ հետեւելու այս պատմական հանդիսութեան: Անկարագրելի է զգացած ազգային հպարտութիւնս, տպաւորութիւնս: Բաւերը կը պակսին նկարագրելու զգացումներս, ապրումներս: Դեռ մինչեւ այսօր կ'ապրիմ այդ ոգեւորչող պահի ազդեցութեան տակ: Ինչ ալ ըսեմ, ինչպէս ալ գնահատեմ, քիչ է: Այո՛, անգոր եմ նկարագրելու զգացած հոգեկան գոհունակութիւնս ու հպարտութիւնս:

Հ. Պր. Պաղպուտարեան, անկեղծօրէն, զիս ալ, վստահ եմ, մաւր ընթերցողներն ալ վարակեցիք ձեր այնքան անկեղծ ու խանդավառ խօսքերով... Հիմա անցնիմք Մայր Յայրենիք Յայաստան: Ինչպէ՞ս պատահեցաւ որ այս կացութեան մէջ անմիջապէս Երեւան մեկնելու որոշում տուիք:

Պ. Ստացայ անակնկալ հեռաձայն մը հայրենի Հաճնի քաղաքի քաղաքապետ Պր. Գագիկ Մաթէոսեանէն, որ զիս կը հրահրէր Պր. Գագիկ Մաթէոսեանի բարերարութեամբ՝

Նոր Հաճնի քաղաքի մէջ նորակառուց Ս. Ամենափրկիչ եկեղեցիի օծման արարողութեան:

Թէ՛ որպէս հայ եւ թէ՛ որպէս հաճնցի՝ հրահրէր սրտիս շատ մօտ էր, այնպէս որ անմիջապէս մեկնեցայ հայրենիք: Նախքան եկեղեցիին օծումը, մինչեւ Ամենայն Հայոց Հայրապետին, Հայաստանի նախագահին, վարչապետին, նախարարաց կազմին ու պետական աւագանիին ժամանումը, տեղի ունեցաւ մէկ ժամուան յայտագիր: Քաղաքապետ Պր. Գագիկ Մաթէոսեան բացման խօսքը ընելու պատիւը ինծի շնորհեց. իսկապէս որ մեծ պատիւ մըն էր ինծի համար: (Առանձնապէս կու տանք Պր. Պաղպուտարեանի բացման խօսքը): Աչապակերտներու, երգչախումբերու, նուագախումբի եւ առանձին արուեստագէտներու մասնակցութեամբ գործադրուեցաւ գեղարուեստական գեղեցիկ յայտագիր մը: Քիչ ետք ժամանեցին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետ, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյան, վարչապետ Հովիտ Աբրահամեան, նախարարներ եւ պետական ղեմքեր եւ բարերար՝ Գագիկ Մաթէոսեանը: Օծման եկեղեցական արարողութեան ետք շնորհաւորական խօսքերով հանդէս եկան Ամենայն Հայոց Հայրապետը եւ նախագահ Սարգսյան, որոնց մամուլը եւ հեռատեսիլը լայնօրէն արձագանգեց:

Արարողութեան աւարտին, Պ. Մաթէոսեան իր «Փարաւոն» ընդարձակ ու շքեղ ճաշարանին մէջ ընդունելութիւն մը տուաւ, որուն ներկայ եղան Հայաստանի պետական, կառավարական, հանրային ու կրթական հաստատութիւններն ու մարմինները ներկայացնող անձնաւորութիւններ եւ ներկայացուցիչներ, աւելի քան 3,000 հոգի: Ես հպարտ էի որ Սփիւռքը ներկայացնող սակաւաթիւ հրահրեալներէն մէկն էի այնտեղ:

Այս ձեռնարկն ալ գեղեցիկ տպաւորութիւններով ու ապրումներով լեցուց սիրտս ու հոգիս:

Հ. Կարելի՞ է քանի մը լակամ ծանօթութիւններ տալ Նոր Հաճնի քաղաքի բնակչութեան թիւին, դիրքին, կարեւոր մշակութային, կրթական,

հանրային կառոյցներուն մասին:

Պ. Եթէ չեմ սխալուիր, Նոր Հաճնի քաղաքը ունի 15,000 բնակիչ: Երեւանէն 20 քիլոմէթր հեռու է, Սեւանի ճանապարհին վրայ, Աբովեան քաղաքի դիմաց: Ունի իր քաղաքապետարանը, թանգարանը, Հաճնոյ հերոսամարտին նուիրուած գեղեցիկ յուշարձանը, գրադարանը, մարզարանը, հիւանդանոցը, ոսկերչանոցը (հիմնուած Լիբանանէն եկած հայերու կողմէ), հաճնցի Մեծն Մուրատի անուան թիւ 4 դպրոցը, որ տնտեսական պայմաններու բերումով յաճախ նիւթական օգնութեան կարիք ունի: Այնպէս որ, առաջարկեցի քաղաքապետ Պր. Գագիկ Մաթէոսեանին որ բարերարը դառնամ դպրոցին: Առաջարկս սիրով ընդունուեցաւ եւ ես կարելիս պիտի ընեմ նիւթապէս թէ բարոյապէս օգտակար ըլլալ դպրոցին: Որովհետեւ ես կը հաւատամ որ ամէն մէկ սփիւռքահայու պարտականութիւնն է հնարաւորինս օգտակար դառնալ հայրենիքին: Սիրալիբ հանդիպումներ ունեցայ դպրոցի նախկին երեք տնօրէնուհիներուն հետ:

Հ. Կա՞ն ուրիշ Հաճնցիներ, որոնք օգտակար կ'ըլլան Հաճնի քաղաքի թիւ 4 դպրոցին կամ մշակութային որեւէ կառոյցին:

Պ. Ֆրանսայի Հաճնոյ Հայր. միութեան ատենապետ՝ Սարգիս Չուֆեան, անցեալ 15 տարիներուն Հայաստան այցելելով եւ իր հետ տեսակետակալ բժշկական սարքեր տանելով օգտակար կ'ըլլար: Իր մահէն ետք զինք փոխարինած եղբայրը՝ Գէորդ Չուֆեան, 5,000 տոլար նուիրած է դպրոցին, որուն դասարաններէն մէկը կը կրէ իր անունը: Նմանապէս, Ֆրանսայի Հաճնոյ Հայր. միութեան տարեկան փոքրիկները կը կազմակերպէ, որոնք ընթացքին 20,000 սարմա եւ 10 հազար պէտքեղներ վաճառելով, հասցիքը կը նուիրէ թիւ 4 դպրոցին: Առաւել, Ֆրանսայի մեր միութիւնը հիմնած է ֆրանսերէնի դասաւանդութեան դպրոց մը, զոր կը հովանաւորէ պետութիւնը եւ որմէ գոյացած հասցիքը նոյնպէս կը զրկուի Հաճնի քաղաքի թիւ 4 միջնակարգ դպրոցին:

Բաց աստի, ունինք առատաձեռն, ազնուական հոգիով մեր հայրենակից Վազգէն Գալթիկեանը Լուիզիանա նահանգէն, որ իր կարգին սրտաբուխ նուիրատուութիւններով օգտակար կ'ըլլայ Նոր Հաճնի թիւ 4 դպրոցին եւ այլ մշակութային հաստատութիւններուն:

Հ. Պր. Պաղպուտարեան, աւարտելէ առաջ այս խիստ հաճելի հարցազրույցը, ունի՞ք եզրափակիչ խօսք մը:

Պ. Կ'ուզեմ անգամ մը եւս կրկնել քիչ առաջուան խօսքը: Ամէն մէկ սփիւռքահայու վզին պարտքն է օգտակար ըլլալ Մայր Հայաստանին: Ասիկա, ամէն տեսակի նկատառումներէ վեր, իմ անխախտ համոզումս է: Եւ ա՛յս պէտք է ըլլայ ամէն մէկ սփիւռքահայու համոզումը, ո՛ւր ալ, ո՛ր երկիրն քի տակ ալ գտնուի:

Յ.Գ. Անոնք որ կը փափաքին նիւթապէս օգտակար ըլլալ Հաճնի քաղաքի թիւ 4 միջնակարգ դպրոցին կամ քաղաքի որեւէ մշակութային հաստատութեան, կրնան կապ պահել Պր. Եփրեմ Պաղպուտարեանի հետ, որուն հեռաձայնի թիւն է, բնակարան՝ (818) 2437029, բջջային՝ (818) 3349932:

ԻՆՉՊԵՍ ԸՆԴՈՒՆԻԼ ՁԵՐ ՇՈՒՐՁԸ ԿԱՏԱՐՈՒՈՂ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մարդու լավագույն յատկանիշներն են կամքի ուժը, կարգապահությունը եւ որոշումներ ընդունելու ունակությունը: Սովորաբար մարդը կ'ակնկալէ, որ ամէն ինչ ըլլայ այնպէս, ինչպէս ինքը կ'ուզէ, ինչպէս ձեռնառու է իրեն: Բայց միշտ էլ, որ այդպէս կ'ըլլայ: Իսկ ինչպէս սորվիլ ընդունիլ ձեր շուրջը կատարող իրադարձությունները, եթէ անոնք չեն համընկնի ձեր սպասելիքներուն:

մարդիկ, եղանակը, լուրերը եւ այլն, պէտք է փորձել պայքարիլ անոնց դէմ եւ անտեղի ուժ վատնել: Ամէն ինչ ընդունեցէք այնպէս, ինչպէս որ է: -Եթէ որեւէ բան ձեզի համար հաճելի է, պէտք է ընկճուիլ, այլ պէտք է զայն օգտագործել յօգուտ ձեզի: Ասիկա հիանալի քայլ է: -Դուք էլ կրնաք արտասուելով կամ պոռայով որեւէ բան փոխել: Պարզապէս պէտք է յաղթահարէք այդ փորձությունը: Յառաջ շարժելու եւ նոր ձեռքբերումներ ունենալու համար պէտք է համբերատար ըլլալ:

ՉԱՐԱՃԵԻ ԱՂՋԻԿՆԵՐՈՒՆ ԲՆՈՐՈՇ ՈՒԹ ՅԱՏԿԱՆԻՇ

Տղամարդոց հաճելի կը թուին կատակելու զգացում ունեցող, չարածճի, ինքնավստահ եւ որոշ չափով խորամանկ աղջիկները: Այսպիսի աղջիկներուն բնորոշ ութ յատկանիշ:

տղամարդը կը հասկնայ, որ ան կնոջ համար ուղղակի կարիքները հոգալու եւ գումար տրամադրելու համար էլ, այլ անոր սիրելին է:

1. Անկանխատեսելիութիւն. տղամարդոց մեծամասնութիւնը կը սիրէ անկանխատեսելի կիները, որոնց հետ մշտապէս օրը հետաքրքրական ու յագեցած կ'անցնի:

5. Անկեղծութիւն. սովորաբար կիները կը սիրեն, որ տղամարդը հասկնայ իրենց փափաքները: Բայց տղամարդիկ այլ կը սիրեն այն կիները, որոնք անկեղծօրէն կը պատմեն իրենց մտքերու եւ փափաքներու մասին:

2. Ինքնավստահութիւն. գաղտնիք է, որ տղամարդոց համար հաճելի են ինքնավստահ կիները, որոնք գիտեն, թէ ինչ կ'ուզեն: Այս տեսակ կիներ երբեք անտեղիօրէն չեն անհանգստացներ զիրենք:

6. Նախաձեռնող բնավորութիւն. անկասկած ընտանիքի կամ յարաբերություններու մէջ գլխավորը տղամարդն է, սակայն ան նոյնպէս երբեմն կը փափաքի, որ նախաձեռնողի դերը կինը առնէ:

3. Անհնազանդութիւն. տղամարդիկ կը պաշտեն այնպիսի կիները, որոնք արտաքինապէս շատ ձիւղ պահւածակ կը ցուցաբերեն, բայց ննջասենեակին մէջ կրնան անապասելիօրէն խենթանալ ու խենթացնել իրենց գուզները:

7. Կրթութ. չարածճի կիներ աւելի կը քոտ կը համբուրուին: Ռեւէ տղամարդ կ'երագէ իր կողքին տեսնել այնպիսի կին, որ բաւական զգայուն է, կրթու է անոր համբոյրը հաճուցէ կը պատճառէ իրեն:

4. Ինքնասէր. չարածճի աղջիկները գիտեն, թէ ինչը կրնայ հաճուցէ պատճառել իրենց: Տղամարդոց համար հաճելի են այնպիսի կիներ, որոնք ինքնուրոյն են, ինքնասէր, կրնան ապահովել իրենք իրենց: Նման կիներու պարագային

8. Խորամանկութիւն. բնավորութեան այս գիծը կ'օգնէ այն ժամանակ, երբ տղամարդը չի կրնար որոշում կայացնել կամ կ'երկմտի եւ խորամանկ ու խելացի խորհուրդի կարիք կը զգայ: Ասիկա կը գրաւէ տղամարդիկը: Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

ՔԱԼԵՆ ՈՒ ՀԱՆԳԻՍՏ ՔՈՒՆԸ՝ ԱՌՈՂՁՈՒԹԵԱՆ ԳՐԱՄԱՍՆ

Արտաքինին հետեւելու աւելի պարզ ձեւ, քան քայլեր, չկայ:

հանգստացնող ազդեցութիւն կ'ունենայ ջղաջին համակարգին վրայ եւ կը նպաստէ հանգիստ քունին:

Իտէլական տեւողութիւնը 45 վայրկեան է: Փորձեցէք այդ ընթացքին անցնիլ մօտ 3 քմ: Այդպիսի արագութիւնը կը բարելաւէ թթուածնային փոխանակությունը: Եթէ զբօսանքի աւարտին կը նկատէք շնչառութեան եւ զարկերակի արագացում, կը նշանակէ, ամէն ինչ կարգին է: Եթէ այդպէս էլ, ուրեմն աւելի արագացուցէք ձեր ընթացքը կամ քայլերու ծրագիրին մէջ ընդգրկեցէք նաեւ բարձունքներու յաղթահարումը: Ժամանակ առ ժամանակ եռանդուն կերպով շարժեցէք ձեռքերը: Ասիկա պիտի զօրացնէ թթուածինի մատակարարումը օրկաններուն:

Հանգիստի ժամ. դուն հնարաւորութիւն ունիս ճաշէն ետք քնանալու մօտ կէս ժամ, բայց այդ ժամանակ կը նստիս համակարգիչին դիմաց: Շատ իզուր: Մասնագէտները կը հաւաստիացնեն, որ կարճատեւ ցերեկային քունը ամենայլաւ եւ արդիւնաւէտ միջոցն է յոգնածութեան դէմ պայքարելու համար:

Բացի այդ, մաքուր օդի մէջ կատարուած մարմնամարզությունը

Փորձէ ստեղծել քեզի համար այդպիսի »հանգիստի ժամ«: Համոզուած եղիլ, դուն պիտի արթննաս թարմ եւ կենսուրախ: Եթէ չես կրնար քնանալ, լողանք առ՝ բուրումնաւէտ աղով:

Ձուրը կը հանէ լարուածությունը եւ կը հանգստացնէ:

ՆԻԻԹԵՐ, ԶՈՐՍ ՊԵՏՔ Է ՔՆՆԱՐԿԵԼ ԱՍՈՒՍՆՈՒԹԵՆԵՆ ԱՌԱՋ

Կատարեալ գուզներն են ըլլար եւ միշտ էլ, որ անոնք կրնան նոյն կարծիքը ունենալ այս կամ այն հարցին շուրջ:

արդեօք հաւատարմութիւնը ձեր միութեան պահպանման ամենակարեւոր նախապայմաններէն մէկն է, թէ՛ ոչ: Ի՞նչ կրնայ պատահիլ դաւաճանութեան պարագային: Իսկ եթէ գուզներն են համար փոխադարձ դաւաճանութիւնը ընդունելի է, ուրեմն կարելի է շարունակել յարաբերությունները նոյն ընթացքով:

Ուստի, կան նիւթեր, գորս անպայման պէտք է հաշուի առնել ու քննարկել մինչեւ ամուսնանալը՝

4. Աւերել. աւերել կամ միւս կախեալութիւնները ոչ միանշանակօրէն կրնան ընդունուիլ գուզներէն կողմէ: Եթէ կինը կամ տղամարդը ամէն օր չափէն աւելի ալքոլային խմիչք կ'օգտագործէ, պէտք է յուսալ, որ ամուսնութեան հետք ան պիտի հրաժարի այդ կախեալութեանէն: Ասիկա պէտք է նախօրք քննարկել:

1. Չաւակներ. հաւանաբար ամուսիններէն մէկը չի փափաքիլ զաւակ ունենալ, իսկ միւսը ուղղակի կ'երագէ այդ մասին: Ասիկա գուզներն են կեանքի բաւականին կարեւոր փաստ է:

2. Գումար. ամուսնութեան առաջ շատ կարեւոր է քննարկել, թէ ինչպէս կը պատրաստուի ծախսել ընտանիքի նիւթական միջոցները: 3. Հաւատարմութիւն. մինչեւ ամուսնանալը պէտք է քննարկել, թէ

ՄԵՂՐԱՉՈՒՐԻ ՕԳՏԱԿԱՐ ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

1. Մեղրաշուրը իսկական հրաշալի միջոց է, որ հասանելի է բոլորին: Մեղրաշուրը հրաշալի կերպով կ'ազդէ մարմնին վրայ:

կալարակային յատկանիշներ: 5. Ամբողջ մարմինը կը մաքրէ բջիջային մակարդակով:

Մէկ թէյի դգալ մեղրը լուծել մէկ գաւաթ ջուրի մէջ: Մեղրը ջուրի մէջ պիտի ստեղծէ լաստերային կապեր, որոնք կը բարձրացնեն անոր բուժական յատկանիշները: Մեղրաշուրը ամբողջութեամբ եւ դիւրութեամբ կ'իւրացուի մարմնի կողմէ:

6. Կը բարելաւէ հաստ աղիքին աշխատանքը: Մեղրաշուրը պէտք է խմել առաւօտեան՝ դատարկ ստամոքսին: Մեղրաշուրի մէկ բաժակը պէտք է խմել մէկ անգամով, ասիկա շատ կարեւոր է: Ստամոքսի փականը կը բացուի, եւ մեղրաշուրը անմիջապէս կը լեցուի աղիքին մէջ, որմէ ետք կը ներծծուի արեան մէջ:

2. Մեղրաշուրը կը բարելաւէ մարտդական համակարգը:

Մեղրաշուրով կրնաք մաքրել նաեւ դէմքը: Անիկա կը սնուցանէ մորթը՝ կը դարձնէ աւելի փափուկ եւ նուրբ: Ասիկա դիմաշարքաման բնական միջոց է, որ ամենահինն ու ամենաժամանակակիցն է միաժամանակ:

3. Կը բարձրացնէ դիմադրողականութիւնը: Կ'անցնէ քրոնիկ հարբուխները, պրոնչիթները, թոքերէն դուրս կը հանէ խորիւր:

4. Մեղրաշուրը ունի նաեւ հա-



COMING SOON 1001 nights Authentic Middle Eastern Mediterranean Lebanese Cuisine WORLD-CLASS HOOKAH LOUNGE ENTERTAINMENT PLEASANT INDOOR OUTDOOR SEATING 1829 S. Brand Blvd., Glendale, CA 91204 | 818.552.1001

ԿԱՐՁՈՒ ՄՐԱՇ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸԱՄԱՐ) ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ 1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104 ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԸՆԴԱՋԱՅՆԵԼ (626) 797-7680

ՃՈՐՔԱՅԷՖԸ ԿԸ ԺԱՄԱՆԻ ՅԱՅԱՍՏԱՆ

Հոկտեմբերի սկզբին ֆրանսահայ յայտնի ֆուտպոլիստ Եուրի ձորքայեֆը կը ժամանի Հայաստան՝ մասնակցելու Երեւանում այս տարի առաջին անգամ անցկացուելիք վազքի միջազգային կիսամարաթոնին՝ «Երեւան ՌԱՆԱՐՄ 2015»-ին:



Յայտնի մարզիկն ընդժուռ է, որ սա հրաշալի առիթ է լինել Մայր Հայրենիքում, վայելել քաղաքամայր Երեւանը եւ մասնակիցը դառնալ հրաշալի մարզական միջոցառմանը:

«Ուրախ եմ, որ լեզենդար Ռոբերտ Էմմիլյանն այսպիսի նախաձեռնութեամբ է հանդէս գալիս եւ Երեւանում առաջին անգամ կ'անցկացուի վազքի միջազգային կիսամարաթոն: Ամբողջ աշխարհում նմանատիպ մարաթոններ եւ կիսամարաթոններ մշտական ապորտային միջոցառումներ են եւ կ'ուզեմ, որ Երեւանցիները, եւ հայ ժողովրդի համար էլ այն դառնայ ամենամեայ, քանի որ վազքը առողջ ապրելակերպի առաջին նախապայմաններից մէկն է: Մեծ ոգեւորութեամբ եմ ընդունել մասնակցելու հրաւերն ու եղբորս՝ Ֆրանսայի Դեսին քաղաքի մշակութային, սպորտային եւ միջազգային կապերի գծով փոքրաքաղաքային Դեսին ձորքայեֆի հետ կը լինեմ կիսամարաթոնի առաջին շարքերում եւ բոլորին կոչ եմ անում միանալ մեզ,- ընդգծում է 1998-ին աշխարհի եւ 2000 թուականին Եւրոպայի

ախոյեան, հայազգի ֆուտպոլիստը: Նշենք, որ «Երեւան ՌԱՆԱՐՄ 2015»-ի մեկնարկը կը տրուի Հոկտեմբերի 3-ին, որը կ'անցկացուի Սպորտի եւ երիտասարդութեան հարցերի նախարարութեան, Երեւանի քաղաքապետարանի, Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտէի եւ Հայաստանի աթլետիկայի ֆեդերացիայի հովանու ներքոյ: Միջոցառման պաշտօնական կազմակերպիչն է «ՌԱՆԱՐՄ» ընկերութիւնը՝ Հայաստանի աթլետիկայի ֆեդերացիայի նախագահ Ռոբերտ Էմմիլյանի ղեկավարութեամբ: Միջոցառումը, որը մեկնարկելու է Հանրապետութեան հրապարակում, ներառելու է 4 վազքարշաւ. կիսամարաթոն (21,097 կմ), փոխանցումավազք (2 x 10,550 կմ), 5 կմ վազք, 2,5 կմ վազք 12 – ավելի տարիք ունեցող դպրոցականների համար:

ՅԱՅԱՍՏԱՆԻ ՅԱԲԱՔԱԿԱՆԻՑ ՅՐԱԲԵՐ ԵՆ ՍՏԱՅԵԼ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ՅԱՆԴԵՍ ԵԿՈՂ 13 ՖՈՒՏՊՈԼԻՍՏԵՐ



Արտերկրում հանդէս եկող 13 ֆուտպոլիստներ հրաւիրուել են Հայաստանի ազգային հաւաքական՝ մասնակցելու յառաջիկայ հաւաքին: Հայաստանի ազգային թիմը նախապատրաստուում է Սերբիայի (Սեպտեմբերի 4-ին) եւ Դանիայի (Սեպտեմբերի 7-ին) հաւաքականների դէմ Եւրո-2016-ի ընտրական խաղերին:

Հայաստանի հաւաքականի հնարակները ցուցակում տեղ չեն գտել Եկատերինբուրգի «Ուրալի» յարձակուող էդգար Մանուչարեանը, Մինսկի «Դինամոյի» կիսապաշտպան Արթուր Եղիզարեանը եւ Նիժնի Նովոքոբայի «Վոլգայի» ուղեւոր Արթուր Սարգիսովը, ով վերջերս ստացել էր ձեռքի կտրուածք եւ բաց է թողնելու մօտ երկու ամիս:

Հայաստանի հաւաքականի գլխավոր մարզիչի պաշտօնակատար Սարգիս Յովսէփեանի հրապարակած ցուցակն ունի հետեւեալ տեսքը. Ռոբերտ Արզումանեան, «Ամկար» (Ռուսաստան)

Հրայր Մկոյեան, «Էսթեղլալ» (Իրան)

Գաել Անդոնեան, «Մարսել» (Ֆրանսա)
Յովհաննէս Համբարձումեան, «Վարդար» (Մակեդոնիա)
Կառլէն Մկրտչեան, «Անժի» (Ռուսաստան)
Գէորգ Լազարեան, «Մարիտիմո» (Փորթուգալիա)
Հենրիխ Միխիլարեան, «Բորուսիա» (Դորմունդ, Գերմանիա)
Մարկոս Պիզելի, «Ակտոբէ» (Ղազախստան)
Արտիոմ Սիմոնեան, «Յիուրի» (Շուեյցարիա)
Արաս Օզբիլիս, «Սպարտակ» (Մոսկուա, Ռուսաստան)
Նորայր Ասլանեան, «Ալմեր» Սիթիէ (Հոլանտա)
Ռուսլան Կորեան, «Լուս-Էներգիա» (Ռուսաստան)
Եուրա Մովսիսեան, «Սպարտակ» (Մոսկուա, Ռուսաստան)
Արտերկրում հանդէս եկող ֆուտպոլիստների ցուցակում դեռ հնարաւոր են փոփոխութիւններ, իսկ Հայաստանի առաջնութիւնում խաղացող ֆուտպոլիստների ցուցակը կը հրապարակուի յաջորդ յաբաթ, փոխանցում է ՀՖՖ կայքը:

ԱՆՈՒՇ ԳՐԻԳՈՐԵԱՆԸ՝ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԵԻՐՈՊԱՅԻ ԱՆՈՅԵԱԼ



Հունգարիայում աւարտուեց բունջքամարտի աղջիկների Եւրոպայի առաջնութիւնը, ուր ամենից բարձր ծածանուեց նաեւ հայոց եռագոյնը: 51 կգ քաշային Անուշ Գրիգորեանը վստահ ելոյթներով յաղթեց իր բոլոր մրցակիցներին եւ կանգնեց պատուոյ հարթակի ամենավերին աստիճանին: Եւրոպայի երիտասարդների առաջնութեան եզրափակչում Անուշ Գրիգորեանի մրցակիցը յոյն Պլեա Ֆոտէինն էր, որին մեր մարզուհին ոչ մի հնարաւորութիւն չտուեց: Յիշեցնենք, որ Անուշ Գրիգորեանը 2014 թուականին նուաճել էր նաեւ երիտասարդների աշխարհի ախոյեանի տիտղոսը:

«ՍԱՆՉԵՍԹԵՐ ՍԻԹԻՆ» ԱՌԱՋԱՏԱՐ

Անգլիական Պրեմիեր լիգայի երրորդ տուրում «Մանչեսթեր Սիթին» Լիւերպոլում 2:0 հաշուով յաղթեց «Էվերտոնին»: Հիւրերից երկրորդ խաղակէստում կոլի հեղինակ դարձան Սերբիայի հաւաքականի պաշտպան Ալեքսանդր Կոլարովը եւ ֆրանսացի կիսապաշտպան Սամիր Նասրին, ով աչքի ընկաւ Յայա Տուրէի արտակարգ փոխանցումից յետոյ: Այս յաղթանակի շնորհիւ մանչեսթերցիները 9 միաւորով դարձան միանձնեայ առաջատար:

ԻՆԳՈԼՇՏԱԴՏ-ԲՈՐՈՒՄԻԱ՝ 0:4.

ՄԻՒԹԱՐԵԱՆԸ՝ ԿՈԼԱՅԻՆ ՓՈԽԱՆՅՄԱՆ ՅԵՂԻՆԱԿ

Գերմանիայի առաջնութեան երկրորդ տուրում Դորմունդի «Բորուսիան» հիւրընկալուելիս 0:4 հաշուով յաղթել է «Ինգոլշտադտին»: Հենրիխ Միխիլարեանը դրուագները մէկուկում դարձել է կոլային փոխանցման հեղինակ: Կոլերը՝ Գինտեր 55, Ռոյս 60 (11մ), Կազալա 84, Օբամեյանգ 90+1:

ՆԵՅՄԱՐԸ ՅԱՍԱՉԱՅՆՈՒԵԼ Է ՏԵՂԱՓՈԽՈՒԵԼ ՄԱՆՉԵՍԹԵՐ ԵՈՒՆԱՅԹՏ. THE GUARDIAN

Անգլիական «Մանչեսթեր Եունայթուդը» մտադիր է ձեռք բերել կատալոնական «Բարսելոնայի» պրագիլացի յարձակուող Նեյմարին: Մանկուսականները մտադիր են գործարքն աւարտել ամրանը, սակայն չի բացառուում, որ դա տեղի կ'ունենայ մէկ տարուց: Ինչպէս տեղեկացնում է «The Guardian»-ը, 23-ամեայ ֆուտպոլիստն արդէն համաձայնուել է տեղափոխուել անգլիական ակումբը: Նեյմարի պայմանագիրը «Բարսելոնայի» հետ աւարտուում է 2018 թուականին:

ԱԼԵՔՍԻՍ ՍԱՆՉԵՍՆ ՈՒ ԼՈՒԻՍ ՍՈՒԱՐԵՍԸ ՄԻԵԲՆՈՅՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՖՈՒՏՊՈԼԻՍՏԵՐ ԵՆ. ՎԵՆԳԵՐ

«Արսենալի» գլխավոր մարզիչ Արսեն Վենգերն իր թիմի վիտեղ Ալեքսիս Սանչեսին համեմատել է «Բարսելոնայի» յարձակուող Լուիս Սուարեսի հետ: «Սանչեսն ու Սուարեսը նոյն մակարդակի ֆուտպոլիստներ են: Սուարեսը կեղրոնական յարձակուող է, իսկ Սանչեսն քաշուած է դէպի եզրը, յաճախ տեղաշարժուում է՝ օգտագործելով իր խաբքերը: Բայց երկուսն էլ ընդանուր շատ բաներ ունեն: Սանչեսին դուր է գալիս գրոհել, սրել խաղը, մրցակցի պաշտպանական գծում քառս առաջացնել: Նա խաղադաշտի լայնքով չի շարժուում, այլ միայն առաջ է նետուում: Իւրաքանչիւր խաղում նա յաղթանակի է միտուած: Ամէն ինչից գատ, նա իր խաղային ոճն ունեցող ֆուտպոլիստ է, նա պայթուական է եւ ունի բարձր արագութիւն», - յայտարարել է ֆրանսացի մասնագէտը:

Ձեր Ծանուցումները Վստահեցէ՛ք «Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
massis2@earthlink.net

ՀՈԳԵՅԱՆԳԻՍ



Հանգուցեալ **ԽՈՐԷՆ ԴԱԶԱՐԵԱՆԻ** մահուան քառասունքին առիթով (մահացած **Լիբանան**) հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի **Կիրակի, Օգոստոս 30, 2015ին, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ 500 Central Avenue, յաւարտ Ս. Պատարագի:**

Սգակիրներ՝
Այլին՝ Սոնիկ Ղազարեան եւ զաւակները Գարուիլին, Դալար եւ Նաթալի (Լիբանան)
Եղբայրը՝ Ոսկեբերան եւ Կարինէ Ղազարեան եւ զաւակը Գրիգոր Մասիս եւ Անի Պօղոսեան
Ծորճ եւ Երան Փայասեան եւ զաւակները
Եւ համայն հարազատները եւ բարեկամները:
Հոգեհանգստեան պաշտօնէն ետք հոգեճաշ պիտի մատուցուի **Phoenicia ճաշարանին մէջ, 343 North Central Avenue, Glendale:**
Հանգուցեալին յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:

ՀՈԳԵՅԱՆԳԻՍ



Հանգուցեալ **ՊՕՂՈՍ ԴԱԶԱՐԵԱՆԻ** մահուան քառասունքին առիթով (մահացած **Լիբանան**) հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի **Կիրակի, Օգոստոս 30, 2015ին, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ 500 Central Avenue, յաւարտ Ս. Պատարագի:**

Սգակիրներ՝
Այլին՝ Լուսին Ղազարեան եւ զաւակները Գրիգոր, Սերժ եւ Նայիրի (Լիբանան)
Եղբայրը Ոսկեբերան եւ Կարինէ Ղազարեան եւ զաւակը Գրիգոր Մասիս եւ Անի Պօղոսեան
Եւ համայն հարազատները եւ բարեկամները:
Հոգեհանգստեան պաշտօնէն ետք հոգեճաշ պիտի մատուցուի **Phoenicia ճաշարանին մէջ, 343 North Central Avenue, Glendale:**
Հանգուցեալին յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:

ՄԱՅԱԶԴ



ԹՈՐՈՍ ԺԵՐԷՅԱՆ

Խոր ցաւով կը գուժենք մեր ամուսնոյն, հօր, եղբօր եւ հարազատին՝ **ԹՈՐՈՍ ԺԵՐԷՅԱՆԻ** մահը որ պատահեցաւ **Չորեքշաբթի, Օգոստոս 19ին, 2015, արկածի հետեւանքով:**

Թաղման կարգը տեղի պիտի ունենայ **Շաբաթ, 29 Օգոստոսին, 2015, կէսօրէ ետք ժամը 1:00ին Ալթատինայի Mountain View գերեզմանատան մէջ:**

Սկազիրներ՝
Ջաւակները՝
Տէր եւ Տիկ. Թոմի Ժերէճեան եւ զաւակները
Տէր եւ Տիկ. Էտի եւ Էլիզապէթ Ժերէճեան եւ զաւակները
Քոյրը՝ Ազնէս Փշտիկեան եւ զաւակները
Քոյրը՝ Մայրանուշ Ժերէճեան
Mr. and Mrs. Jack and Tina Logston
Տիկ. Աստղիկ Ափարտեան եւ զաւակները
Եւ համայն շէրէճեան, Փշտիկեան, Ափարտեան, Թաթուլեան, Hager, Logston ընտանիքներ, հարազատներ եւ բարեկամներ:
Հանգուցեալին յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:

ՅԱԲԱԿՑՈՒԹԻՒՆ

Հանգուցեալ **ԹՈՐՈՍ ԺԵՐԷՅԱՆԻ** մահուան տխուր առիթով **Տէր եւ Տիկ. Կրէկ եւ Սիլվա Նիկողոսեաններ** իրենց ցաւակցութիւնը կը յայտնեն հանգուցեալի պարագաներուն, մասնաւորաբար **Տէր եւ Տիկ. Յովակիմ Ժերէճեանին, Տիար Ճոնի Ժերէճեանին եւ Տէր եւ Տիկ. Նելսըն Ժերէճեանին:**

Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթին:

«100 ԿԵԱՆՔ»-Ի ՀԱՄԱՅԻՄՆԱԴԻՐՆԵՐԸ

Շաբուճակուած էջ 13-էն

մրցանակի միջոցով մենք նոյն գործն ենք իրականացնում: Մենք ցանկանում ենք ճանաչման արժանացնել այն անհատներին, ովքեր ամբողջ աշխարհում կեանքեր փրկելու քայլեր են ձեռնարկել, յաճախ՝ դժուարին ու վտանգաւոր պայմաններում: Մենք հրաւիրում ենք

հանրութեանը www.100Lives.com/Prize առցանց պորտալի միջոցով մասնակցելու խրախուսանքի արժանի թեկնածութիւններին առաջադրման գործընթացին:

Յուսով ենք, որ դուք կը միանաք մեզ՝ առաջադրուած թեկնածուներին ներկայացնելու ընթացքում, որպէսզի մեր օրերի փրկարարներն այնպիսի գնահա-

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Հանգուցեալ Երուանդ Պապայեանի մահուան առաջին տարելիցին առիթով Պապայեան եւ Գարայեան ընտանիքները իրենց խորին շնորհակալութիւնները կը յայտնեն Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Արեւմտեան Ամերիկայի նախկին առաջնորդ Գերաշնորհ Տէր Վաչէ Արք. Յովսէփեանին եւ Սբ. Պետրոս Հայց. Առաքելական Եկեղեցւոյ հովիւ Արժանապատիւ Տէր Շնորհք Ա. Քահանայ Տէմիրճեանին, ինչպէս նաեւ Եկեղեցւոյ Թաղական խորհուրդի պատուարժան անդամներուն: Իրենց սիրալիր գործակցութեան համար:

Այս առիթով, Պապայեան եւ Գարայեան ընտանիքները հազար տոլար (\$1000) կը նուիրեն Սբ. Պետրոս Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Նոր Համալիրի շինութեան ֆոնտին:

ՍՈՒՓՈՐՄԱՐՔԵԹԻ ԿԱՍ WALL STREET

Շաբուճակուած էջ 15-էն

Թեան հանդէպ, կրօնական համեստ դատարարակութիւնն իսկ աւելորդ կը նկատեն, Հայկական ցեղասպանութեան փորձառութեան մասին տրուող տարրական գիտելիքները կը նկատեն հակադատարարական ու մտալիլիչ, յետադիմական, ոչ-ամբողջական (թէեւ գոհ պիտի մնային, եթէ սեռային ազատ ընտրութեան մասին «դատարարակութիւն» տրուէր մատղաշ հայրերինը...): Այդպիսի մօտեցում ունեցողները (թող ներուր ըսել՝ «հակաթէն նոր ելածներ») ունին կրկին անգամ չմար պատասխան ու պատճառաբանութիւն, զոր կը բանաձեւեն հետեւեալ պարզամիտ ու նախնական լեզուով.
- Բայց իրականութիւն է, չէ՞, մեր շրջապատին մէջ քիչ չէ թիւը միասեռականներու, որ ձեռնարկուած (transgender)...

Թող հայ ընթերցողը դատէ ասկէ անդին:

Հանդիպեցանք ու տակաւին պիտի հանդիպինք կրթական աշխատանքի «վերին աստիճաններուն» վրայ յայտնուած անձերու, որոնք հոն են, որովհետեւ «այսինչեան» ազդեցիկ անձին գործակիցներէն են ... շուկային մէջ կամ առեւտրարդիւնաբերական ու շինարարական ասպարէզներուն մէջ: Հարկաւոր է յազուրդ տալ այսպիսի անձերու փառասիրական նկրտումներուն՝

տնտեսական եւ այլ կարգի շահութաբեր գործակցութիւնը ամրացնելու ու խորացնելու նպատակով:

Մեր յօդուածաշարքի եզրափակիչ պարբերութեան անցնելէ առաջ կը փափաքինք անգամ մը եւս ընդգծել, թէ մենք չենք քննադատեր ու այսպաներ բոլոր կրթական մշակները, տնօրէնները, կրթա-հոգաբարձական մարմիններու անդամները, որոնց մէջ եղած են եւ կան իսկական նուիրեալներ ու հայ դպրոցին դերին հաւատացողներ: Հարցը այն է, որ սկսած է պակսիլ այդպիսիներու թիւը յօգուտ ապերասան ու կրթական գործէն շատ չհասկցող նոր դարու «Աբխազի մարտերու»: Հայ մամուլին կոչումը պէտք է ըլլայ մատնանշել խոցելի կողմերը՝ արդար, առարկայական ու քննադատական մօտեցումներով:

Ձեռնաբար, ատենը եկած պէտք է համարել հանրային քննարկման (public debate on national level) նստելու եւ խորապէս վերլուծելու եւ գնահատելու կացութիւնը: «Գեղարդ»-ի յաջորդ թիւերուն մէջ այսուհետեւ յաճախ պիտի հանդիպիք հարցախոյզներու, կարծիքներու եւ առաջարկութիւններու: Կը քաջալերենք ընթերցողները որ չվարանին իրենց խօսքը ըսելու հայերէն կամ անգլերէն լեզուներով:

ՀԱՅ ԴՊՐՈՑԸ ՏՈՒՆ Է ՀԱՅՈՒՆ ԱՇԽԱՐՀԻ ՉՈՐՍ ԾԱԳԵՐՈՒՆ: (Մ. Իշխան)

էք ամէն օր, ինչպէս նաեւ հնարաւորութիւն կ'ընձեռի տեղեկանալ այն անձանց գործունէութեան մասին, ովքեր այսօր ամբողջ աշխարհում ամենախոցելի մարդկանց հետ են աշխատում»:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎՆԱԺԱՄԸ

Շարունակում է 6-էն

չան է համախմբուելու, երկխոսելու, ինչ-որ տեղ իրար գիշերելու եւ, խոշոր հաշուով, ազգային միաբանութեան համեմատ: ՀԱՊԿ-ի շրջանակներում մեր կառուցողական մասնակցութեանը շօշափելի այլընտրանք ուղղակի չկայ: ԵԱՏՄ-ի շրջանակներում լիարժէք ինտեգրուելուն շօշափելի այլընտրանք նոյնպէս չի երեւում: Համոզուած եմ, որ որքան խորը ինտեգրուենք այդ կառույցներում, որպէս հարաւորակաւ տարածաշրջանի ուժեղ խաղացող, աւելի հետաքրքրական ենք լինելու Արեւմուտքի եւ Արեւելքի ուժային կենտրոնների համար:

Տնտեսական զարգացման հարցը

Արդէն երկու շաբաթից աւել է, ինչ հրապարակուել են մեր տնտեսական զարգացման առաջին կիսամեակի արդիւնքները: Ինչ չի հանդիպել լուրջ տնտեսական վերլուծութիւն, որը կը վիճարկէր այդ ցուցանիշները: Մեր հեղինակաւոր տնտեսագէտներն ասում են, որ լաւ տարին կարող է աւարտուել նաեւ տնտեսական աճով: Ամէն դէպքում ճիշտ էին նրանք, ովքեր տարուայ սկզբին, երբ արժեզրկուել էին դրամը, ռուբլին եւ միւս տարադրամները, կոչ էին անում չշտապել վերահաս աղէտի մասին եզրակացութիւններ անելու: Ռուսաստանի տնտեսական իրավիճակը թելադրում է թուլացնել Արեւմուտքի հետ վաղուց ինտեգրուած լիբերալների ազդեցութիւնը եւ ուժեղացնել պետականամէտների ձայնը: Այդ մարդիկ են, որ կարծում են, որ Ռուսաստանը վերջապէս պէտք է խթանի սեփական արտադրութիւնները եւ բանականութեան սահմաններում թուլացնի տնտեսական, ապրանքային կախուածութիւնը արտասահմանից: Ահա այստեղ է, որ մեր տնտեսագէտները իրաւացիօրէն խորհուրդ են տալիս իշխանութիւններին եւ գործարար աշխարհին առաջարկել, փնտռել եւ գտնել նոր, դեռեւս չօգտագործուած հնարաւորութիւններ Ռուսաստանի, ինչու չէ, նաեւ Ղազախստանի եւ Բելառուսի տնտեսական հսկաների ուշադրութիւնը մեզ վրայ բեւեռելու համար: Մեր ռազմարդիւնաբերական համալիրի համագործակցութեան հնարաւորութիւնները ռուսաստանցի գործընկերների հետ լաւատեսութեան տեղ են բացել:

Պարզ է, որ մենք ապրում ենք

ԻՆՉ Է ՄՏԱԾՈՒՄ ՊՈՒՏԻՆԸ

Շարունակում է 7-էն

այս հարցերը վաղաժամ են հնչում: Բայց որ Պուտինի իշխանավարմանը լուրջ վտանգներ կարող են սպառնալ՝ դա եւս չի կարելի բացառել: Արեւմուտքի հետ լարուածութիւնը օտարերկրեայ ներդրումների նուազման է հանգեցրել, հարիւրաւոր բանկեր կանգնած են կոլապսի եզրին: Բողոքի լուրջ ալիք-իաներ, իհարկէ, ՌԴ-ում տեղի չեն ունեցել, Պուտինի վարկանիշը շարունակում է բարձր մնալ, ռուս հասարակութեան գերակշիռ մասն էլ համարում է, որ պաշտպանական ոլորտն աւելի առաջնահերթ է, քան երկրի տնտեսական զարգացումը:

Բայց արդեօք այս իրավիճակը կարող է երկար պահպանուել:

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓԻՒՌԻ ԿԱՊԵՐ

Շարունակում է 14-էն

տութիւնների ազգային ակադեմիայի գործառնութեանը՝ հայազէտների համաժողովի կամ պատմաբանների գիտաժողովի կազմակերպումը: Դա ոչ միայն նսեմացնում է Ակադեմիայի եւ նրա ինստիտուտների դերը, այլեւ կասկածի տակ է դնում կազմակերպուող այդ եւ նման ձեռնարկների գիտական մակարդակն ու որակը:

- Մեր գրոյցը աւարտին հասցնելու համար կ'ուզեմայի ամփոփիչ խօսք լսել Ձեզնից: Փաստօրէն, նախարարութիւնը գոյութիւն ունի, եւ անցնող 8 տարիների ընթացքում մեծ ծաւալի աշխատանք է կատարուել, որի ընթացքում թոյլ են տրուել որոշ սխալներ, որոնց մի մասին անդրադարձանք մեր գրոյցում: Փորձառու գործչի Ձեր դիրքերից ի՞նչ թելադրութիւն կ'ուզէք անել:

- Նորից կրկնեմ. չի սխալուում նա, ով չի աշխատում: Այս պարա-

զայում սխալի հարց չէ, կողմնորոշման հարց է, չափի զգացողութեան հարց է, նպատակայարմարութեան հարց է, ինայողութեան հարց է, անվտանգութեան հարց է, հոգեբանութեան հարց է, նոյնիսկ, ազապտացիա կոչուող երեւոյթի հարց է: Ձի կարելի նոյն թեման, յատկապէս նոյն անհատն ամէն օր երեւայ հեռուստատեսկրանին, դա էժանացնում է երեւոյթը, անհատին, կորչում է կարեւորութիւնը, այստեղ չի գործում «որքան շատ՝ այնքան լաւ»-ը... Այստեղ միախառնուած է պետական խնդիր, ազգային խնդիր, քաղաքական խնդիր, տնտեսական խնդիր, դաւանաբանական խնդիր, եւ պէտք է մի փոքր մարմին, մի ուղեղ, որը կը համադրի բոլոր նախարարութիւնների հնարաւորութիւններն ամէնքին իր բնագաւառով՝ սփիւռքի հետ աշխատելու համար:

Զրուցեց՝ Հ. ԱԻԵՏԻՔԵԱՆԸ Խմբ. կողմից.

Գրաւում Թուական
Mark Your Calendars
Հայաստանի Անկախութեան Օրուայ ՓԱՌԱՏՕՆ
Սեպտեմբեր 20, 2015

SUNDAY	MONDAY	TUESDAY	WEDNESDAY	THURSDAY	FRIDAY	SATURDAY
		1	2	3	4	5
6	7	8	9	10	11	12
13	14	15	16	17	18	19
20	21	22	23	24	25	26
27	28	29	30			

Armenian Independence Day FESTIVAL

To reserve your booth please call Nor Serount Cultural Association
Ձեր կրպակները ապահովելու համար
Հեռաձայնեցէք Նոր Սերունդ Մշակութային Միութեան
(818) 391-7938